Քրիստոնյա Հայաստան

2021, ՕԳՈՍՏՈՍ Բ, ԹԻՎ 16 (588)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության արարողությանը

Օգոստոսի 30-ին՝ 2021–2022 թթ. ուսումնական նոր տարեշրջանին ընդառաջ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Սուրբ Տրդատ բաց խորանին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ կրթության մշակների օրհնության ավանդական կարգը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի կողմից կազմակերպված արարողությանը ներկա էին ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար տիար Ալեքսանդր Շագաֆյանը, մարզային կրթության վարչությունների ղեկավարներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորներ, ՀՀ ԶՈՒ ռազմակրթական համալսարանների պետեր, Երեւանի եւ մարզերի հանրակրթական դպրոցների տնօրեններ եւ բազմաթիվ մանկավարժներ:

Օրհնության կարգի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց կրթության ոլորտի երախտավորներին:

Վերջում ի պատիվ հրավիրյալների՝ տեղի ունեցավ ընդունելություն:

Պատվարժա՛ն ռեկտորներ, կրթության գործի պատասխանատուներ եւ սիրելի՛ մանկավարժներ,

Ուրախ ենք վերստին ողջունելու ձեզ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Բերում ենք ձեզ հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքը: Մենք մեծապես կարեւորում ենք, որ կրթության գործին նվիրված մշակներդ նոր ուսումնական տարվա մեկնարկին ուխտավորաբար այցելում եք Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որպեսզի Աստծո օրհնությամբ սկսեք ձեր շնորհընկալ առաքելությունը:

Ձեր հոգածության եւ հայացքի ներքո են ուսում առնում եւ կրթվում մեր ժողովրդի զավակները՝ մեր երկրի ապագա քաղաքացիները: Արդարեւ, մեծ պատասխանատվություն եւ մեծ պատիվ է մանկավարժ լինելը, քանզի յուրաքանչյուր ազգի հուսալի ապագան պայմանավորում են ուսումը, կրթությունն ու դաստիարակությունը: Հատկապես արդի ժամանակներում, բազմակողմ ու արագընթաց դարձած մեր կյանքի բոլոր ոլորտներում առավել ենք զգում այդ իրողությունը: Գլոբալիզացիայի համահարթեցնող ընթացքների եւ օրեցօր նորացող գիտական ձեռքբերումների հանդիման՝ այսօր արդիական գիտելիքի ուսուցմանը հավասարազոր կարեւորվում է հոգեւոր նկարագրի ու ներաշխարհի ձեւավորումը:

Սիրելինե՛ր, մեր հայրենիքի կյանքում տեղ գտած վերջին զարգացումները, արցախյան պատերազմը, հայրենիքի ներկայիս ծանր ու անկայուն վիճակը վկայում են, թե որքան մեծ տեղ պետք է տրվի կրթությանը եւ մրցունակ գիտելիքին մեր կյանքում: Մեր կրած փորձությունը եւ շարունակվող դժվարությունները առավել շեշտադրում են նաեւ ճշմարիտ արժեքներով կերտված աշխարհայացքի, վեհ իդեալների ու ձգտումների կարեւորությունն ու պահանջը, որոնք նախ եւ առաջ սերմանվում, աճում ու զարգանում են կրթօջախներում եւ ընտանիքում: Կրթությունն ամենահզոր զենքն է: Դարերի ընթացքում մեր ժողովուրդը մաքառել ու գոյատեւել է եւ իր կյանքը կերտել ու վերակերտել է ամբարած գիտելիքի, ճանաչողության ու իմաստությունների շնորհիվ: Այսօր նույնպես հայրենիքի անվտանգությունն ու ապահովությունը պետք է խարսխված լինեն մեր երիտասարդների ձեռք բերած գիտելիքների, ինքնաճանաչողության, հայրենասիրության ու ազգասիրության վրա:

Մատուցվող գիտելիքը եւ կրթությունը ամրորեն հաստատված պիտի լինեն ազգային-ավանդական արժեհամակարգի վրա: Մեր խնդիրն այսպես կոչված աշխարհաքաղաքացի պատրաստելը չէ, այլ հայրենասեր, բարոյական բարձր հատկանիշներով օժտված, ազգային դիմագիծ ունեցող, ուսյալ, բարեկիրթ անձ եւ նախաձեռնողիր քաղաքացի: Այս առումով կարեւորում ենք ամբողջական ծրագրով «Հայ Եկեղեցու պատմության» պարտադիր դասավանդումը դպրոցում: Այսօր յուրաքանչյուրս մեր տեղում պետք է հոգ տանենք, որ կրթության ոլորտում նախաձեռնված բարեփոխումները, որոնց շուրջ առիթ ունեցել ենք արտահայտվելու, չվնասեն, այլ իրապես օգտակարություն ունենան մեր մատաղ սերնդի կրթության գործում: Այս ամենում կարեւոր է ձեր նախաձեռնողությունը՝ ապահովագրելու մեր մանուկներին եւ պատանիներին անցանկալի երեւույթներից ու մոլորություններից, զորացնելու նրանց հոգում ազգային ինքնագիտակցության ոգին եւ այն համոզումը, որ գիտելիքը լույս է եւ աղբյուր բարիքների:

Կրթության մշակներիդ օրհնության այս նվիրական օրը առանձնահատուկ ցանկանում ենք արձանագրել, որ հայրենյաց սահմանների պաշտպանության ծառայության մեջ այսօր դրսեւորվող ոգին պտուղն ու արգասիքն են նաեւ ձեր ներդրած ջանքերի: Սիրելինե՛ր, առաջնորդվեք եւ առաջնորդեք ձեր սաներին առ Աստված հավատքով ու ապավինությամբ, եւ կենսունակ պիտի լինեն ձեր սերմանած արժեքները, ու մեր ժողովուրդը պիտի պահպանի վերելքի ներուժը՝ սաղմոսերգուի խոսքի համաձայն, որ պատգամում է. «Պահիր Տիրոջ ճանապարհները, եւ Նա կբարձրացնի քեզ երկիրը ժառանգելու» (Սղմ. ԼԶ 34):

Մեր Եկեղեցին, ինչպես բոլոր ժամանակներում, շարունակելու է աջակցել մեր երկրում կրթության ու գիտության զարգացմանը: Շարունակելու ենք համագործակցել նախարարության եւ կրթօջախների հետ՝ ապագայի բարի հույսերով ու հավատով:

Վերստին Մեր գնահատանքն ենք բերում ձեզ՝ կրթության մշակներիդ, ձեր բարձր հանձնառության, ձեր անխոնջ ջանքերի ու անսպառ նվիրումի համար: Առ Աստված աղոթքով հայցում ենք, որ երկնավոր Տերը խաղաղ պահի մեր հայրենիքը եւ մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի, օրհնի մանկավարժներիդ աշխատանքը բարի արգասիքներով եւ բազմապատկի ձեր ուժն ու եռանդը եւ բարի վաստակը մեր հայրենիքի եւ ժողովրդի կյանքում:

Շնորհի, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում կրթական գործի կազմակերպիչներին, մանկավարժներին, աշակերտ եւ ուսանող Մեր զավակներին:

Սիրելիներ, նոր ուսումնական տարեշրջանը բերում է ապագայի նոր հույսեր ու ծրագրեր եւ հավատ, որ այսօր սերմանված գիտելիքներն ու արժեքները վաղը պիտի արգասավորվեն որպես բարի արդյունքներ: Այս տեսլականով են վերստին բացվում մեր կրթական հաստատությունների դռները:

Մեր ժողովուրդն իր պատմության ամենադժնդակ ժամանակներում անգամ բարձր է դասել ուսումն ու կրթությունը, որոնք առավել կարեւորվում են գիտական ձեռքբերումների մեր դարում: Այսօր, երբ մեր երկիրը կանգնած է մեծ մարտահրավերների առջեւ, մեր ժողովուրդը տագնապալի օրեր է ապրում, կրթության արժեքն իմացող մեր նախնյաց ոգով ու դժվարությունները հաղթահարելու նախանձախնդրությամբ՝ ամեն ջանք պիտի ներդրվի ուսումնական գործընթացը լավագույնս իրականացնելու համար, որպեսզի ազգիս յուրաքանչյուր զավակ իր գիտելիքներով, հայրենասեր ոգով ու ձգտումներով դառնա ուժն ու զորությունը մեր հայրենիքի եւ մեր ապահով գալիքի կերտման:

Աստծո առատ շնորհներն ենք հայցում այսօր կրթօջախներ մուտք գործող մեր սիրեցյալ զավակներիդ, մաղթում մտքի ու հոգու կորով, անդուլ ջանասիրություն: Գիտցեք, որ ուսման մեջ ձեր ձեռքբերումները հաղթանակներ են, որոնք պիտի ծառայեցնեք ձեր անձնական կյանքի, ձեր ընտանիքների եւ մեր երկրի ու ժողովրդի առաջընթացին: Սուրբ Գիրքը պատգամում է. «Մի՛ թող իմաստությունը, եւ նա կպաշտպանի քեզ, սիրիր այն, եւ նա կպահպանի քեզ» (Առակաց Դ 6):

Բարձրյալի զորակցությունն ենք հայցում մանկավարժներին եւ կրթության գործի կազմակերպիչներին, մաղթում արգասավոր ուսումնական տարի: Թող Աստված օրհնի մեր հայրենիքը, մեր ժողովրդի կյանքը եւ կրթության մշակների շնորհընկալ առաքելությունը՝ ի պայծառություն եւ ի փառս ազգիս:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Վաթսունականների արձակագիրներ.
Ժամանակը եւ հերոսը

Սկիզբը՝ թիվ 12–15

1960–1970-ականների արձակը, գրականագետների կարծիքով, հիմնականում նյութի կուտակման շրջան է եւ որակական նոր փուլի անցնելու նախապատրաստություն:

Հաղթահարվել են սխեմատիզմը, կյանքի տոնական, կարգախոսային ճանաչողությունը, սակայն նոր ժամանակների էությունն իրենց մեջ լիարժեքորեն խտացնող գործեր դեռեւս չեն ստեղծվել: Այս տարիների արձակի բնորոշ գիծ է նաեւ ազգային հատկանիշների խորացումը, այս առումով առանձնանում են Շուկշինի ու Այթմատովի գործերը: Միաժամանակ նկատվում են արդի նյութի համակողմանի ուսումնասիրություն, այսօրվա կենսական հարցերի համարձակ բացահայտման միտում: Այս տեսակետից նշված գործերին պետք է ավելացնել նաեւ Վիլ Լիպատովի «Եվ այդ ամենը նրա մասին...» ու Գրիգորի Բակլանովի «Բարեկամներ» վեպերը:

1960–1980-ականներին խորհրդային գրականության մեջ արձակի առանձին մի ուղղություն էր գյուղական գրականությունը: Ներկայացուցիչներից են Վասիլի Շուկշինը, Ֆյոդոր Աբրամովը, Վասիլի Բելովը, Վալենտին Ռասպուտինը, Լեւ Դոդինը, Վիկտոր Աստաֆեւը:

Ֆյոդոր Աբրամովը (1921–1983) պատկերեց ռուսական հյուսիսի հետպատերազմյան գյուղաշխարհի դաժան իրականությունը: Դեռեւս 1954-ին հանդես եկավ «Կոլտնտեսային գյուղի մարդիկ հետպատերազմյան գրականության մեջ» ճշմարտախոս հոդվածով, որից աշխատանքից վտարելու պարտադրանքով ստիպեցին հրաժարվել: Դժվարությամբ, խիստ գրաքննությամբ տպագրվեցին նաեւ առաջին վեպերը:

Գյուղաշխարհն արտացոլված է նրա «Պրյասլիններ» եռապատումի մեջ («Եղբայրներ եւ քույրեր», 1958, «Երկու ձմեռ, երեք ամառ», 1968, «Ուղիներ-խաչուղիներ», 1973): Պրյասլինները գյուղական տոհմ էին, նրանց ազգանունն է: Այս վիպաշարի շարունակությունն է «Տուն» (1978) վեպը: Նույն միջավայրն է նաեւ վիպակներում՝ «Անհայրություն» (1961, հիշենք, որ ապագա գրողը հայր չի տեսել. մեկ տարեկան էր, երբ նա մեռավ), «Պելագեյա» (1969), «Քարե ձիեր» (1970), «Ալկան» (1972): Իրականությունը որքան դաժան, այնքան նրա կերպարները կամքով ուժեղ մարդիկ են:

1963-ին «Նիվա» ամսագրում տպագրված «Խուսափելով բուն ասելիքից» վիպակը Լենինգրադի քաղկոմի կողմից որակվեց կոլտնտեսային կյանքի աղավաղում, խմբագիրը հեռացվեց աշխատանքից: Մեկ-երկու դրական արձագանքներին հաջորդեցին ջարդարարական հոդվածները:

Ինքը՝ Ֆյոդոր Աբրամովը եւս, հեշտ կյանքով չի ապրել: Կամավոր մեկնել է բանակ, երկու անգամ ծանր վիրավորվել: Ասպիրանտական տարիներին Լենինգրադի պետական համալսարանում նրան հանել են գրականագիտության այնպիսի հսկաների դեմ, որպիսիք էին Բորիս Էյխենբաումը եւ Գրիգորի Գուկովսկին, ինչի համար հետագայում զղջում-ամաչում էր: Անցել է դասախոսական աշխատանքի, դարձել ռուս գրականության ամբիոնի վարիչ եւ 1960-ին հրաժեշտ տվել գիտությանը՝ նախընտրելով ազատ գեղարվեստը:

Թեեւ «Պրյասլիններ» եռագրությունն արժանացավ Պետական մրցանակի (1975), իսկ ինքը 1980-ին պարգեւատրվեց Լենինի շքանշանով, բայց գրաքննությունը նրան շարունակում էր հետապնդել: Միայն հետմահու լույս տեսավ նրա «Մաքուր գիրք»-ը, որ խորհրդածություն է Ռուսաստանի բախտի մասին:

Ժամանակակից հայ արձակը հերոսի ընտրության, կերպավորման, հերոսի գործողություններին բնորոշ վիճակների պատկերման տեսակետից զգալի առնչություններ ունի խորհրդային գրականության նշված դրսեւորումների հետ: Այդ առնչություններն առաջին հերթին պայմանավորված են ժամանակի արտաքին ու ներքին շերտերի ճիշտ զգացողությամբ: Տարբեր են ավանդույթները, տարբեր է միջավայրը, բայց նույնն է համակարգը, նույնն են կենսավիճակներն ու հիմնախնդիրները, նույնն է պաշտոնական գաղափարական ուղղվածությունը: Այս ամենն արդեն ստեղծում են գրական առնչությունների բավարար նախադրյալներ:



Դ.

Գրական հերոսի նկարագրի առումով ինչ ստեղծագործական առնչություններ կարելի է տեսնել ժամանակակից հայ եւ միութենական արձակի միջեւ: Այս հարցն իր ընդգրկմամբ բավականին լայն ու խոր է եւ կարող է դառնալ առանձին ծավալուն ուսումնասիրության նյութ: Այդ իսկ պատճառով կբավարարվենք սոսկ մի քանի զուգահեռների սեղմ բացահայտմամբ:

Նախ ընդհանրությունը շատ մեծ է Աբրամովի եւ Մաթեւոսյանի միջեւ. երկուսի առջեւ գյուղի անողորմ կենցաղն է: «Ահնիձոր» ակնարկի տպագրությունից հետո (ՍԳ, 1961, թիվ 4) Մաթեւոսյանի դեմ ելան Կենտկոմի գաղափարական մահակակիրները, իսկ ամսագրի խմբագիրը հեռացվեց աշխատանքից: Նույնը 1963-ին կատարվեց Աբրամովի եւ «Նիվա» ամսագրի խմբագրի հետ: Երկուսի ստեղծագործությունը հարազատացնող հիմնական եզրը խորունկ մտահոգությունն է հայրենի երկրի բախտի համար:

Արտաքուստ աչքի չընկնող, պարզ ու հասարակ մարդկանց կյանքի լարվածությունը պատկերելու տեսակետից հետաքրքրական առնչություններ կան Հրանտ Մաթեւոսյանի «Երկրի ջիղը» վիպակի, մի քանի պատմվածքների եւ Չինգիզ Այթմատովի «Սպիտակ շոգենավը» վիպակի միջեւ: Այն տառապանքը, ստորացումն ու անարգանքը, որ կյանքում կրել է Մաթեւոսյանի Աղունը, հատկանշական է նաեւ Այթմատովի Ճապուկ Մոմունին: Այդ երկու հերոսուհիներն էլ, ըստ էության, կյանքի լուծը քաշող, բայց չերեւացող մարդիկ են: Աղունի եւ Մոմունի կերպարներն ստեղծված են դրամատիկ վիճակների մեջ՝ տեղտեղ ողբերգական ընդգծվող շեշտերով: Նրանց միշտ էլ սպառնացել են ու խեղճացրել, վիրավորել ու տրորել, սակայն ապրելու մղումը հաղթել է ամեն ինչի: Դժվարին կյանքը կարեկցանքի ու համակրանքի է արժանացնում նրանց:

Երազի ու իրականության հարաբերության եւ այդ հարաբերության հոգեբանական ընկալման տեսակետից նմանություն ունեն նաեւ նրանց պատանի հերոսները՝ Մաթեւոսյանի Արայիկ Քառյանը եւ Այթմատովի «Սպիտակ շոգենավի» Տղան: Երազն ու կյանքի դժվարությունները կողք կողքի ապրում են նրանց մեջ եւ իմաստավորում նրանց օրն ու ճակատագիրը:

Ավելացնենք եւս մեկ այլ ընդհանրություն. նույն «Սպիտակ շոգենավ»-ի անտառապետ Օրոզկուլը եւ նրա կին Բեկեյը երեխա չունեն: Այդպիսին է Մաթեւոսյանի «Տերը» վիպակի հերոսը՝ դարձյալ անտառապահ Ռոստոմը: Այստեղ Ճապուկ Մոմունը երկրորդ կին է: Օրոզկուլի եւ Ռոստոմի կերպարները եւս մոտ են՝ երկուսն էլ կատաղի են, կոպիտ են շրջապատի հանդեպ, ներքին արհամարհանքով են նայում միջավայրը լրացնող դեմքերին:

Բանտային վիճակների ընտրության եւ այդ վիճակների մեջ գործող գրական այս կարգի այլ ընդհանրություններ մատնանշում են իրենք՝ ռուս գրականագետները: Իրենց տեսական ու վերլուծական հոդվածների մեջ նրանք ուշադիր են հատկապես Հրանտ Մաթեւոսյանի ստեղծագործության հանդեպ: Լ. Անտոպոլսկին, օրինակ, օրգանական կապեր է տեսնում Բիտովի եւ Մաթեւոսյանի ստեղծագործության միջեւ: Նա գտնում է, որ երկու գրողների որոնումներն իրար մոտ են, շատ մոտ, որ երկու գրողներն էլ փոքր շրջապատի նյութով ստեղծում են «հերոսների իսկական տիեզերք» (*«Վոպրոսի լիտերատուրի», 1975, թիվ 10, էջ 92*): Մերձեցման եզրերը գրողներին, այս դեպքում Մաթեւոսյանին, ամենեւին չեն հեռացնում ինքնությունից: Դա շեշտելու նպատակով գրականագետն ավելացնում է. «Բայց իրենը, իրենը, ընթերցողին անկրկնելիորեն իրենն է տալիս Հ. Մաթեւոսյանը»:

Ժողովրդական կյանքի ուսումնասիրության ու բացահայտման տեսակետից հետաքրքրական զուգահեռներ կարելի է տեսնել նաեւ Մաթեւոսյանի, Այթմատովի ու Վասիլի Շուկշինի միջեւ: Երեքն էլ իրենց ստեղծագործությամբ հետամուտ են ժողովրդական կերպարների, ժողովրդական կյանքի պատկերմանը: Սա ժամանակակից արձակի գլխավոր ուղղություններից մեկն է:

Մյուս կարեւոր առնչությունը տեսանելի է պատերազմական կյանքի յուրացման մեջ: Հիմա արդեն պատերազմի ոգեշունչ պատկերման փոխարեն իր տեղն է ամրապնդում նյութի հոգեբանական յուրացումը: Բացահայտվում են նախկինում անտեսված դրամատիկ վիճակները: Այս առումով զուգահեռ կարելի է տանել Ռասպուտինի «Ապրիր եւ հիշիր» եւ Խալափյանի «Երիցուկի թերթիկներ» վիպակների միջեւ: Երկուսում էլ պատերազմի իրական դեմքն ստանում է ողբերգական ու հերոսական լուծում: Այս զուգահեռը լայն ընդգրկումով իր մեջ կարող է ներառել նաեւ այլ հեղինակների: Առնչություններ կան նաեւ Խալափյանի «Ոսկե միջինը», Չեյթունցյանի «Ամենատխուր մարդը» վիպակների եւ Դումբաձեի «Սպիտակ դրոշակներ» վեպի միջեւ: Խալափյանը ներկայացնում է բանտի կալանավորի եւ ազատ մարդու՝ հսկիչի գոյավիճակների նմանությունը, Չեյթունցյանն առաջ է մղում ներքին ազատության հիմնախնդիրը, իսկ Դումբաձեն բացահայտում է կյանքի իրական մի պատկեր եւ ազնվության ու մաքրության հատիկներ որոնում կալանավորի շորեր հագած անմեղ ու մեղավոր մարդկանց հոգիներում: Չեյթունցյանի ու Դումբաձեի գործերում նմանությունն ակնհայտ է նաեւ որոշ դրվագներում: Չեյթունցյանի Ստրաուդի եւ Դումբաձեի Նակաշիձեի տեսիլքները բավականին նման են. տեսիլքներում նրանք ոգեկոչում են իրենց ազատագրման հարցով մտահոգված մայրերին, հանդիպում սիրած աղջիկներին եւ այլն:

Քաղաքացիական պատասխանատվության եւ ժամանակակից կյանքի սուր ուղղվածության տեսակետից ընդհանուր առնչություններ կան նաեւ արդիական նյութով ստեղծագործող գրողների միջեւ: Այս առումով նաեւ 60-ականների հայ արձակագիրների համար է ճիշտ հնչում Վ. Սոկոլովի համամիութենական արձակի փորձից ածանցվող այն միտքը, թե՝ «Այսօր եկել է մեր ժամանակակցի հոգեկան կյանքի գլխավոր հիմնախնդիրներն ի մի բերող մասշտաբային հասարակական-փիլիսոփայական վեպի ժամանակը» (*«Վոպրոսի լիտերատուրի», 1975, թիվ 9, էջ 51–52*):

Միութենական եւ հայ գրականության կապերն ինչպես արձակում, այնպես եւ պոեզիայում հատկապես ակնառու են ժամանակակից նյութի գեղարվեստական յուրացման ասպարեզում: Այս առումով անհնար է չհիշել գեղարվեստական այն մերձավորությունը, որ խորհրդային իրականության պատկերման տեսակետից կար Էդուարդաս Մեժելայտիսի եւ Պարույր Սեւակի միջեւ: Նրանք, անկախ իրարից, կանգնած լինելով նույն իրականության առջեւ, ունեին նույն քաղաքացիական պատասխանատվությունը, գեղարվեստական նույն կողմնորոշումը: Այս քաղաքացիական գործուն հայացքն է, ահա, որ այսօր փոխանցվել է նաեւ արձակին: Ժամանակակից կյանքի հիմնական էությունը ներկայացնող նյութը եւ հիմնախնդիրները որոշ չափով ընդհանրական են ինչպես բազմազգ գրականության ներկայացուցիչների, այնպես էլ հայ գրողների համար: Կարեւորը, ըստ էության, գրականության ուղղվածությունն է եւ ոչ թե նյութի ընդհանրությունը կամ կերպարային նմանությունը, որոնք երբեմն անխուսափելի են:

Ինչպես խորհրդային լավագույն արձակագիրների, այնպես էլ հայ գրողների՝ հատկապես 60-ականների սերնդի գործերում նկատելի է սխեմատիզմի վերջնական հաղթահարման, կյանքի մերկապարանոց գաղափարական ճանաչողության վերացման միտում: Դրա փոխարեն առավել կարեւորություն է ստանում կյանքի հոգեբանական-փիլիսոփայական բացահայտման հակվածությունը: Միաժամանակ կարեւոր նշանակություն է ստանում նաեւ խոսքի հիմնահարցային ուղղվածությունը: Այս տեսակետից արդեն միութենական ճանաչում ունեցող արձակագիրների անունների կողքին կարելի է հիշատակել նաեւ Մաթեւոսյանի, Պետրոսյանի, Խալափյանի անունները: Ինչո՞ւ այս անունները: Որովհետեւ տարբեր նախասիրությունների տեր այս գրողներն ավելի «բաց» են ժամանակի առջեւ՝ լինի գյուղի կյանք թե քաղաքի, լինի կյանքի հիմնախնդիր կամ փոքր թվացող հարց: Նրանց քաղաքացիական կողմնորոշումն էլ առնչություն ու կապեր է ստեղծում Շուկշինի, Բելովի, Բիկովի, Ռասպուտինի, Այթմատովի եւ ուրիշների ստեղծագործության հետ:

Մեր արձակի պակասությունները եւս զուտ տեղական բնույթ չունեն: Այդ պակասության տեսակետից եւս ժամանակակից հայ գրականությունը խորհրդային գրականության շրջանակում է:

➥ էջ 4

ԱՅՐԻՎԱՆՔ (ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ) ԵՒ ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴ

Գեղարդի վիմափոր Գալձագն եմ ես,
որին քարե զնդան էին նետել Ազատ գետի ափին
եւ որն Ազատության բրիչով Ճորտության ժայռից հրաշք կերտեց...
Վանքի ավազանի չափ արցունք կար իմ հոգում եւ
Գեղարդի ժայռերից էլ ծանր տառապանք ու ցավ...

Գեւորգ Էմին

Հայաստանի վիմափոր հուշարձանների մեջ Այրիվանք-Գեղարդավանքը ժայռակոփ արվեստի յուրահատուկ կառույց է, հայկական միջնադարյան խոշոր համալիրներից մեկը՝ հռչակավոր իր ինքնատիպ ու եկեղեցաշինության մեջ եզակի ճարտարապետական հորինվածքով: Այրիվանքի հիմնական հուշարձանախումբն ամբողջացել է XIII դարում, որն իր մեջ ներառում է գլխավոր եկեղեցին (Կաթողիկե), մի մեծ ժայռի մեջ փորված երկու եկեղեցիները, գավիթը, մեծ ժամատուն-դամբարանը, միաբանական խցերն ու մատուռները, որոնք, հարավային կողմում ներդաշնակորեն միանալով մեկ ուրիշ գավթի ու եկեղեցու, կազմում են պաշտամունքային մի ընդարձակ համալիր՝ պարփակված XVII դ. կառուցված բրգավոր շրջապարսպի մեջ: Հուշարձանախումբն ու շրջակայքը զարդարում են գեղաքանդակ բազմաթիվ խաչքարերն ու վիմափոր ճգնարանները: Հատկապես նշանավոր է 1213 թ. Տիմոթ եւ Մխիթար կազմողների կանգնեցրած նրբաքանդակ խաչքարը:

Ի սկզբանե սրբավայրը կոչվել է Այրիվանք՝ միաբանների ձեռքով փորված բնական այրերն իբրեւ ճգնարաններ օգտագործելու պատճառով: Շրջակայքում գտնվել է այդպիսի շուրջ 140 քարայր. դրանք ընդամենը մի մասն են բազում ճգնարանների, որոնք դարերի ընթացքում փլուզվել են՝ փխրուն նստվածքային ապարների մեջ փորված լինելու պատճառով:

Համալիրի առաջին քրիստոնեական աղոթատունը, ըստ ավանդության, հեթանոսական սրբավայրի տեղում հիմնել է սուրբ Գրիգոր Ա Լուսավորիչը IV դ. սկզբին: Միայնակյաց ճգնավորները նախապես օգտագործել են բնական քարայրերը: IV դ. Այրիվանք է այցելել կաթողիկոս սուրբ Ներսես Ա Պարթեւը (353–373 թթ.): Որոշ ժամանակ Այրիվանքում է հանգրվանել նաեւ կաթողիկոս սուրբ Սահակ Ա Պարթեւը (387–439 թթ.): VIII դ. առաջին կեսից Այրիվանքում երաժշտաստեղծագործական բեղմնավոր գործունեություն է ծավալել Գրիգոր Գռզիկը, հիմնել Այրիվանքի դպրոցը: Կաթողիկոս Հովհաննես Դ Ովայեցին (833–855 թթ.) 841 թ., թողնելով հայրապետական աթոռը, հաստատվել է Այրիվանքում: X դ. կաթողիկոս Հովհաննես Ե Դրասխանակերտցին, խուսափելով արաբ ոստիկանի հետապնդումից, ապաստանել է Այրիվանքում, ապա անցել Սեւանավանք: 926 թ. արաբները ներխուժել են Այրիվանք, գանձերի տեղն իմանալու համար կտտանքների ենթարկել միաբաններին, սպանել շատերին, կողոպտել վանքը (ներառյալ ձեռագրերը) եւ հրդեհել շինությունները: Վանքում հոգեւոր-մշակութային կյանքը վերակենդանացել է միայն սելջուկյան արշավանքներից հետո՝ XIII դ. կեսից: Այրիվանքը XIII դ. դարձել է կրթամշակութային հայտնի կենտրոն, վերստին գործել է Այրիվանքի դպրոցը, որը 1279 թվականից գլխավորել է Մխիթար Այրիվանեցին: Նրա եւ Հովհաննես Գառնեցի վարդապետի օրոք Այրիվանքի դպրոցում ծաղկել է գրչության արվեստը, ստեղծվել է հարուստ մատենադարան: Մխիթար Այրիվանեցին կյանքի վերջին տարիներին ճգնել է Այրիվանք-Գեղարդավանքի արեւմտյան կողմի քարայրերից մեկում եւ պատին արձանագրություն թողել (1291 թ.): 1387 թ. Գրիգոր Խլաթեցին, ուխտի գալով Գեղարդավանք, ձեռք է բերել Մխիթար Այրիվանեցու՝ 1287 թ. կազմած ժողովածուն: XV դ. Այրիվանքի դպրոցի ուսուցչապետ է դարձել Գրիգոր Տաթեւացու աշակերտ Սիմեոն վարդապետը, որը կարգավորել է վանքի կանոնադրությունը:



➥ էջ 5

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՈԳԵՂԵՆ ՕՁԱԽՈՒՄ

Բակունց գրողին տակավին դպրոցական տարիներից սիրեցի՝ ընթերցողական վայելում ունենալով նախ նրա «Ալպիական մանուշակ» գոհարակերտ պատմվածքը: Հետո, արդեն ուսումնական ծրագրերից զատ, հափշտակված ընթերցեցի «Միրհավ», «Սպիտակ ձիավորը», «Խոնարհ աղջիկը», «Ծիրանի փողը», «Այուսարի լանջին» ու էլի շատ սքնաչելի գրվածքներ: Եվ քանի դեռ չունեի բանասիրական կրթություն, շահեկանորեն զերծ էի կանխակալ գրականագիտական, հաճախ սուբյեկտիվ ուղղորդումներից, տարակարծիք մեկնաբանություններից, ուստի կարդացածս ընկալում էի զուտ պատանեկան ջինջ հոգով՝ անմիջական ու յուրովի:



Գործ՝ Մ. Ասլամազյանի

Բակունցը կյանքիս ուղեկիցն է. տասնամյակներ շարունակ վերընթերցում եմ ոսկեգրիչ սիրելի գրողին կրկին ու կրկին: Եվ ամեն անգամ զարմանալիորեն չնկատված բակունցյան մի նրբերանգ, մի նոր ծալք եմ հայտնաբերում կամ բացահայտում ինձ համար: Օրինակ՝ բավականին ուշ նկատեցի, որ հավերժական սիրո առասպել «Միրհավ»-ի հերոսուհի Սոնան Դիլան դայուն «տաք հնձանում» աշնան հանդիպումին հաջորդած ամռանը «մեռավ երեխայի վրա»: Ինչո՞ւ է հեղինակը մատնանշում «Այդ աշնան հաջորդ ամառը»: Ուրեմն՝ ինն ամիս է անցել, եւ ցավալիորեն չապրեցին նրանց մաքրամաքուր սիրո պտուղը եւ հենց ինքը՝ ոսկեփետուր միրհավի պես Սոնան... Եվ «Սոնային լաջվարդ շապիկով թաղեցին...»:

* * *

... 2020-ի սեպտեմբերի 20-ին՝ վերահաս աղետաբեր պատերազմից ուղիղ յոթ օր առաջ, որպես սրտի վաղեմի փափագ, Ակսել Բակունցի ծննդավայր՝ Գորիս մեկնեցի: Նպատակս տարիներ առաջ իմ ձեռքբերած՝ ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Հենրիկ Մամյանի՝ Ակսել Բակունցին վայելուչ հագուկապով պատկերած գեղարվեստական ուշագրավ գրաֆիկ աշխատանքը գրողի տուն-թանգարանին նվիրելն էր: Միշտ խորհում էի, որ նկարի ճշմարիտ հասցեատերը, արդարեւ, թանգարանը եւ նրա հազարավոր այցելուներն են:

Բացվող օրվա վաղ առավոտյան իմ մեքենայով ճամփա ելա: Նորածագ արեւի առաջին շողերի հետ արդեն Աշտարակից Գորիս՝ 280 կիլոմետրանոց երկարուձիգ ճանապարհին եմ:

Խաղաղ այգաբաց է Արարատյան դաշտում: Ոսկեւորված հսկայաբերձ Սիս ու Մասիսի դիմաց՝ լայնահուն մայրուղու երկու կողմերում, հողի աշխատավորները բերրի այգիներում, դեռ ցողը վեր չելած, խաղողի բերքահավաքի են: Եվ նրանք, եւ Հայաստան աշխարհում ու Արցախում բոլոր-բոլորը խաղաղ սրտով իրենց աշխարհաշեն առտնին գործերին են՝ մեր թշնամյաց կողմից նյութվող մոտալուտ դավերին անտեղյակ, միամիտ ու անհոգ...Մտադիր եմ ճանապարհային հանգույց Գորիսում փոքրիկ առաքելությունս ավարտելուց հետո զբոսաշրջել՝ կամ Տաթեւ, Կապան, Մեղրի ուղղությամբ, կամ էլ՝ Խնձորեսկ, Ստեփանակերտ, Ամարաս ու Գանձասար:

Երանավետ ժամանակներ. գործնականում բաց են իմ առջեւ երկրիս բոլոր ճանապարհները, եւ ոչ մի խոչընդոտ, արգելափակոցներ, այլազան դրոշներ, որ շուտով պիտի ցցվեն մեր պատմական հողերի վրա եւ մեր սրտի մեջ...

Արեւն ավելի բարձրացավ: Անցա Վայոց ձորը, Սարավանը եւ հիմա Որոտանի լեռնանցքի ամենաբարձր կետում եմ՝ ծովի մակարդակից 2344 մետր բարձր: Հենց այստեղ՝ լեռների գրկում, վեր է խոյացել «Զանգեզուրի դարպասներ» բազալտակուռ, լեռնային տեղանքին ու ճանապարհին հիանալիորեն ներդաշնակվող հոյակերտ կառույցը, որին ժողովուրդը նաեւ «Զանգեր» է անվանում:

1980-ականների վերջին այս կոթողն ստեղծվեց Սիսիանի շրջանի երկարամյա ղեկավար, գրականագետ եւ լրագրող Շչորս Դավթյանի մտահղացմամբ եւ անդուլ ջանքերով: Ճարտարապետը մեծաքանքար Ռաֆայել Իսրայելյանի տաղանդաշատ որդին է՝ Արեգ Իսրայելյանը, քանդակագործը՝ Սյունյաց աշխարհի բարի ծնունդ, ՀՀ ժողովրդական նկարիչ Գետիկ Բաղդասարյանը: Հուշարձանի քիվերին Զանգեզուրի խորհրդանիշ զանգերն են քանդակված:

Այստեղից է սկսվում ներկայիս Սյունիքի մարզը՝ հասնելով մինչեւ Արցախ եւ Արաքս: Մտածում եմ՝ տեսնես այս լեռնաշխարհում կա՞մ գեթ մեկ հողակտոր, որին չի դիպել Զանգեզուրի գավառային հողբաժնի գյուղատնտես Ալեքսանդր Թեւոսյան-Բակունցի օրհնված ոտքը...

Արդեն վայրէջք ճանապարհով եմ ընթանում: Առջեւս հորիզոնից հորիզոն, լայն ու ընդգրկուն լեռնային լանդշաֆտին հատուկ բնապատկեր է փռված՝ դեղնականաչավուն գույներով ողողուն: Հեռվում կարծես Սիսիան քաղաքից ինչ-որ բան է նշմարվում, որից շատ այն կողմ բանաստեղծ Համո Սահյանի գովերգած Գյազբել, Աղոթարան վիթխարահասակ լեռներն են՝ կաթնասպիտակ մշուշով շղարշված: Այնտեղ, ձորերի մեջ ծվարած, բանաստեղծի հայրենի Լոր գյուղն է, ուր մեկ ուսումնական տարի ուսուցչություն է արել Սուրբ Էջմիածնի Գեւորգյան ճեմարանի 16-ամյա սան Ալեքսանդր Թեւոսյանը: Ապագա գրող Ակսել Բակունցի գրական հասունացման ճանապարհին, գյուղական բուն կյանքի եւ գեղջկական հոգեբանության ճանաչողության իմաստով, անտարակույս, ծանրակշիռ դեր է ունեցել հայկական հնամենի այս շենը, որտեղ էլ պատանի Ալեքսանդր վարժապետի սրտում ծլարձակում է... Նորին մեծություն սերը («Խոնարհ աղջիկը»): Համո Սահյանն իր մի հուշագրում Բակունցի մասին ի խորոց սրտի ասում է. «Տեսնում եմ նրան... Եվ հուշերիս մեջ նրա ասպետական կերպարի առաջ իրենց ճերմակ գլուխներն են խոնարհում իմ ծննդավայրի երախտապարտ լեռները»:

Հեռաստանում թանձրապատ մշուշների պատռվածքից փորձում եմ տեղորոշել Որոտանի կիրճը: Մտաբերում եմ ԽՍՀՄ եւ Հայաստանի ժողովրդական նկարիչ Մարիամ Ասլամազյանի՝ ինձ պատմած այն հիշարժան դրվագը, երբ ինքը, իր նկարչուհի քույրը՝ Երանուհին, եւ նրանց հյուրընկալած Բակունցը, ձիեր հեծած, Տաթեւի վանք են գնում (ի դեպ, հետագայում գրողի մասին նկարչուհին հուշեր հրատարակեց պատմաճանաչողական անչափ արժեքավոր «Կյանքիս դավթարը» հուշագրությունների գրքում, եւ որի մասին ամբողջական երկու էջով, իմ նախաձեռնությամբ, անդրադարձ տպագրվեց «Ազգ» թերթի 2006 թ. հոկտեմբերի 14-ի համարում):

Մինչ վանական համալիր հասնելը՝ Որոտանի գեղատեսիլ կիրճի «Սատանայի կամուրջ» անվանվող վայրում Մ. Ասլամազյանն առաջարկում է երեքով լուսանկարվել: Սակայն Բակունցը հրաժարվում է:



Գործ՝ Է. Իսաբեկյանի

— Ակսե՛լ, կարծում ես, որ մենք արժանի չե՞նք քեզ հետ լուսանկարվելու,— վիրավորված գանգատվում է Խորհրդային երկրում արդեն բավականին ճանաչում ունեցող Մ. Ասլամազյանը: Բակունցը, տխուր ժպտալով, դառը մի իրողություն է խոստովանում.

— Սիրելինե՛րս, իմ գլխին օրավուր «սեւ ամպեր» են թանձրանում... Պարզապես չեմ ուզում սույն ֆոտո փաստով վտանգեք ձեր ծաղիկ կյանքը...

➥ էջ 4

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՈԳԵՂԵՆ ՕՁԱԽՈՒՄ

➥ էջ 3

Բակունցի կանխագուշակումը, ցավոք, իրականացավ. լուսեղեն մարդուն, մեր մեծագույն գրողին զրպարտում, հանիրավի ձերբակալում, ապա՝ երկար ու տանջալի հարցաքննություններից հետո, Երեւանի բանտից ծածուկ Հրազդանի կիրճ են տանում, գնդակահարում ու թաղում իր իսկ ձեռքով փորած խորշում… Ցայսօր տակավին անհայտ է նրա շիրմատեղին, ինչպես իր ընկեր ու գրչեղբայր հանճարեղ Եղիշե Չարենցինը…

1930-ականների խորհրդային բիրտ իրականություն… Նախ կալանեցին միտքն ու հոգին, ապա ֆիզիկապես ոչնչացրեցին անզուգական մի գրողի, որի արձակը համաշխարհային մեծությունների գլուխգործոցների մակարդակին է: Հզոր գեղարվեստականությամբ, անզուգական հայերենով, համամարդկային գաղափարներով, քնարականությամբ առլեցուն բակունցյան գրական հունձքը, ինչը նա սրտաբուխ հանձնեց ժողովրդին, եւ որն ինքնին մի ամբողջ գրականություն է, իրականում դարձավ գրողի անձնական ողբերգությունը, նրա Գողգոթան…

Գործ՝ Հ. Մամյանի

Կապտագորշ, սահուն ասֆալտուղին, ասես կիլոմետրեր ձգվող լայն ու երկար ժապավեն, անընդհատ քանդվում-բացվում ու փռվում է իմ առջեւ: Հընթացս Բակունցի ժամանակակիցներից էլի մի դրվագ եմ վերհիշում: Շատ տպավորիչ ու ճանաչողական է Վախթանգ Անանյանի «Բակունցի հետ» հուշը: Այն հրապարակվել է 1959-ին, երբ տեւական լռությունից հետո առաջին անգամ պետականորեն նշվել է շինծու մեղադրանքով դատապարտված, իսկ հետստալինյան տարիներին՝ 50-ականների կեսին, արդարացված գրողի ծննդյան 60-ամյակը (ի դեպ, Վ. Անանյանը ժամանակին ինձ պատմել է, որ հոբելյանի առթիվ նա վերջապես պատեհություն է ունենում արտահայտելու ավելի քան քսան տարի սրտում անթեղված սերն ու ցավը՝ առ «անբասիր հոգի սիրելի Ակսելը»):

— Քեզանից հողի հոտն եմ առնում,— գյուղատնտեսական «Մաճկալ» թերթի խմբագիր Վ. Անանյանին մի օր զգացված ասել է հանգամանքների բերումով մայր բնությունից կտրված, մայրաքաղաքում աշխատող եւ ապրող հողապաշտ Բակունցը:

Սրտառուչ է հուշ-պատմվածքի վերջին հատվածը: Բանտարկված Վ. Անանյանը վկայում է. «…նրա ձեռագիրը տեսա բանտի կամերայի մի մութ անկյունում՝ խոնավ պատի ծեփին. «Այսօր տանում են գլուխս ուտելու: Ակսել Բակունց…»: Չոքեցի երեսով դեպի պատը՝ գլուխս ափերիս մեջ, եւ լուռ ողբացի իմ ընկերոջ, իմ ուսուցչի ողբերգական վախճանը: Կսկծացի կախարդական *Միրհավի* համար, որ արյուն տալով գնաց թաղվեց անհայտության մեջ…»:

Ակսել Բակունցի մասին գրված գրականագիտական բազում աշխատությունների ու հոդվածների մեջ հարկ է առանձնացնել Հակոբ Կարապետնցի գնահատականը:

«Մենավոր մի գագաթ է Բակունցը,— գրում է սփյուքահայ անվանի գրականագետը: Նրանից առաջ եւ նրանից հետո արեւելահայ արձակը երբեք չհասավ այն բարձունքին, որ Բակունցն էր՝ ինքնատիպ, բյուրեղ, գրեթե անառիկ: …Զանգեզուրի մթին կիրճերից բարձրացավ գրանիտե հասակը Բակունցի: Ինքն էր ու իր ներքին տիեզերքը: …Բակունցի դեպքում գունատվում են բնորոշումները: …Անակնկալ եկավ Բակունցը, մի բացարձակ ֆենոմեն, որ մեծ գաղտնիքի պես կախվել է հայ գրականության ճակատին»: Հ. Կարապետնցը նաեւ ընդհանուր աղերսներ է տեսնում Բակունցի եւ Ու. Ֆոլկների, Է. Հեմինգուեյի, Ալբեր Քամյուի, Ջեյմս Ջոյսի ստեղծած բարձրակարգ արձակի հետ, եւ դա ամենեւին չափազանցված չէ…

* * *

Մտքիս կիզակետում դարձյալ մեր ժողովրդի պանծալի զավակ Ակսել Բակունցն է՝ լուսավոր, անհասանելի հանճարը, նա, որի հոգու թարգման գրիչը խոսքարվեստի ինչպիսի՜ նոր որակ, ինչքա՜ն շռայլ, անխամրելի գույներ բերեց գրականություն…

Խորին հարգանքով եմ աչքերիս մեջ առնում Բակունց ծնած այս լեռնաշխարհը…

Վերջին կեռմանի բարձունքից, լեռնագոգ տափարակի վրա, մեկեն բացվում է հիասքանչ քաղաք Գորիսի համայնապատկերը՝ կանոնավոր, ուղիղ փողոցներ, վարչական ու բնակելի շենքեր: Իսկ կանաչավետ պարտեզներով պարուրված առանձնատները բնաշխարհիկ, հայկական ժողովրդական, նաեւ ավանդական եւ արդի ճարտարապետական տարրերի համադրումով զուտ գորիսյան ոճի ինքնատիպ գեղեցկագույն նմուշներ են, որոնք քաղաքին առանձնահատուկ կոլորիտ են հաղորդում: Այնուամենայնիվ, Գորիսի «առանձնաշնորհյալ» դիմագիծ են երկինք միտող կոնաձեւ «ցից» քարաժայռերը՝ քերծերը: Դրանցից փուխրերի ներսում հնում համառ մարդիկ անձավ-կացարաններ են փորել եւ այդ յուրատեսակ քարափոր տներում ապրել սերունդներով…



Գործ՝ Փ. Թերլեմեզյանի

Բարձունքից զմայլված դիտում եմ քաղաքը, շրջակա լեռներն ու ձորերը: Մտաբերում եմ գորիսյան տեղանունները, սակայն առանց տեղացի օգնական-հուշարարի՝ դժվար է որոշակիորեն զանազանել, թե որն է Լաստի խութը, որը՝ Դրնգանը, Գյունեյ թաղը կամ Գայլաբունի ձորը, Պղնձաքարը, Շորը… Չէ՞ որ դրանց մասին իրենց գրվածքներում բազմիցս հիշատակել են Ակսել Բակունցը («Կյորես», «Բրուտի տղան» եւ այլն) եւ Վահան Բակունցը՝ իր հեղինակած «Մեծ հույզերի սերմնացանը»՝ ավագ եղբորը նվիրված հիշողությունների հիանալի գրքում:

Հատում եմ Մեղրի—Իրան եւ Արցախ տանող ճանապարհների հանգույց-խաչմերուկը, ավտոմեքենան վարում նվիրական անուններ կրող քաղաքի Դավիթ-Բեկ, Գարեգին Նժդեհ, Անկախության փողոցներով եւ Մաշտոցի 41-ում կայանում իմ փնտրած նշանավոր տան մոտ:

Գրանիտե եռալեզու ցուցանակը ծանուցում է՝ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ, ցուցատախտակի վերնամասում գրողի կիսադեմով պատկերված նկարն է: Տան պատի ոճավորված խորշում Բակունցի բազալտե կիսանդրին է՝ բարեհարմար ագուցված:

Փողոցում ուշադրությունս գրավում է սիզամարգում ամուր ու աներեր կանգնած վիթխարի ընկուզենին՝ բունը դալար լիանաներով ընդելուզված (հետո կիմանամ, որ ծառը պատանի Սանթրի-Ալեքսանդրի տնկածն է՝ դարահասակ կենդանի մասունք-հուշարձան…. Ցանկանք, ուրեմն, որ այն էլի մեկ դար այսպես խշշա կանաչ…):

Կամարաձեւ փայտե դարպասի բաց փեղկով ներս եմ մտնում. սալարկված կոկիկ բակ, խնամված, ընդարձակ այգի եւ, իհարկե, գրողի հորենական տունը: Այն, կարելի է ասել, մեկուկես հարկանի է՝ լայն պատշգամբով, հնաոճ ցանցապատ դռներով ու լուսամուտներով: Տունը 19-րդ դարի վերջին կառուցել է Ակսել Բակունցի խոհեմ հայրը՝ Ստեփան Թեւոսյան Բակունցը:

Ծանոթանում եմ թանգարանի տնօրեն Վարդան Սարգսյանի, աշխատակցուհիներ Անժելա Միքայելյանի, Անահիտ Հարությունյանի, Լարիսա Սարգսյանի հետ:

Ավարտվել է հերթական էքսկուրսիան: Այցելուները մոտենում, երախտիքի անկեղծ խոսքեր են ասում աշխատակիցներին՝ սիրելի գրողի կյանքի ու գործունեության մասին նոր, հարուստ ու հանգամանալի տեղեկություն ստանալու համար: Այցելուներից ճանաչում, ողջունում եմ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Արամ Վարդանյանին, որի հայրենի Թալինի նշանավոր Աշնակում («Դու ծանո՞թ ես Աշնակ գյուղին, / Ուր ծիրանն է հասնում ճյուղին…». Գ. Էմին, «Սասունցիների պարը»), մենք ընդհանուր շատ ընկերներ ու բարեկամներ ունենք: Նա տիկնոջ հետ է Երեւանից Գորիս եկել, եւ պարզապես հաճելի է իմանալ, որ նրանք էլ են բակունցապաշտներ…

Շարունակելի

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Վաթսունականների արձակագիրներ.

Ժամանակը եւ հերոսը

➥ էջ 2

Միութենական գրական մամուլում մեկ անգամ չէ, որ, խոսելով առկա արձակ գործերի մասին, հարց են արծարծել՝ արդեն ժամանակն է ստեղծելու լայն ընդգրկման սոցիալփիլիսոփայական վեպ: Այդ նույն պահանջն այսօր մենք էլ ենք դնում հայ արձակագիրների առջեւ: Հաղթահարվել են 1950-ականների կաշկանդումները, 1960—1980-ական թվականներին ստեղծվել են մեր կյանքի պատկերը ներկայացնող հաջող գործեր, բայց դեռեւս չկան այս նոր ժամանակաշրջանի «Խաղաղ Դոն»-ն ու «Դոկտոր Ժիվագո»-ն, «Վարպետն ու Մարգարիտա»-ն ու «Ոսկե հորթը»:

Բացի այդ՝ ռուս գրականագետներից Եվգենի Սիդորովն իր «Համադրման ճանապարհին» հոդվածում (*«Վոպրոսի լիտերատուրի», 1975, թիվ 6*), գտնում է, որ ռուսական արձակում նկատելիորեն թուլացել է վիպական-պատմողական մտածողությունը, ինչի հետեւանքով իբր մեծ գործեր չեն ստեղծվում: Թեեւ մեծ գործեր ստեղծելու համար պարտադիր չէ անպայման ունենալ պատմողական մտածողություն, բայց որ, իրոք, այդ հատկանիշը թուլացել է, փաստ է: Դա նկատելի է նաեւ մեր արձակում: Եվ հիմա, ըստ էության, եւ արձակագիրների 1960-ականների սերնդի ուժերի հասունացման, եւ փորձի ու կյանքի փաստերի կուտակման, եւ տարբեր ոճերի առկայության տեսակետից հարմար ժամանակն է անցնելու համադրական, բազմաշերտ, հարուստ ու ընդգրկուն գործերի ստեղծման: Հակառակ դեպքում 60-ականների որոնումները, ուշագրավ լինելով հանդերձ, չեն վերածվի համընդգրկուն վեպի ու համապատասխան հերոսի՝ որպես վաթսունականների գրական հուշարձան:

1960—1970 եւ հետագա շրջանի հայ արձակում որոշակի է քնարափիլիսոփայական, պատմափիլիսոփայական արձակի շունչը՝ նկատի ունենալով Մաթեւոսյանի առավել պատմողականության եւ Պետրոսյանի առավել քնարականության հակված ստեղծագործական խառնվածքները: Զուգահեռ հիշատակենք խորհրդային արձակի այնպիսի ուշագրավ գործեր, ինչպիսիք են Յուստինաս Մարցինկյավիչյուսի «Ծիծաղող սոճին», Վասիլի Բելովի «Սովորական գործ», «Գայլերի ոհմակ» վիպակները, Միկոլաս Սլուցկիսի «Աստիճան դեպի երկինք» եւ «Ադամի խնձոր» (1960) վեպերը: Նաեւ Չինգիզ Այթմատովի եւ այլոց վիպասանությունը:

Առաջնահերթ նախապայման է մարդու (հերոսի) կերպարի ամբողջականության պահպանումը, մինչդեռ հենց գյուղագրությո՞ւն, թե՞ քաղաքագրություն հարցադրումն ինքնին խաթարում է այդ ամբողջականությունը:

Այս տեսակետից հիշարժան է բանաստեղծ Եվգենի Եվտուշենկոյի խոսքն իր վեպի տպագրության առթիվ: Նախ, նա խոստովանում է, որ գրականություն է մուտք գործել որպես արձակագիր: Եվ ապա. «Ինձ թվում է, որ մեր ժամանակակից արձակը երբեմն իրեն սահմանափակում է նրանով, որ կյանքի միասնական ամբողջությունը բաժանում է մասերի. մենք ունենք «գյուղագիրներ», որոնց համար դժվար է պատկերացնել քաղաքի մասին գրողներին, եւ «քաղաքագիրներ», որոնց համար դժվար է պատկերացնել գյուղի մասին գրողներին» (*«Լիտերատուրնայա գազետա», 1980, թիվ 1, 1 հունվար*): Այնուհետեւ խոսքը շարունակում է իր վեպի մասին, ինչը թեեւ չի հավակնում «էպոսի համընդգրկունության», բայց այդ միասնության օրինակ է:

Գյուղագրությո՞ւն, թե՞ քաղաքագրություն. սրանք համեմատաբար տեսանելի եզրեր են, բայց հաջորդում են բովանդակային այլ տրոհումներ՝ արդյունաբերական, պատմահեղափոխական, ինտելեկտուալ, հոգեբանական, հայրենասիրական, պատմական եւ այլն:

Ահա այս բազմաճյուղ շարժումը միասնական իրականության ամբողջական պատկեր տեսնելու ցանկությամբ՝ արձակի ընթացիկ վիճակը Եվգենի Սիդորովն ուղղորդում է որպես ճանապարհ դեպի համադրություն: Այստեղ է նաեւ մտավորականության կյանքը, որի «քաղաքային» գիտակցության ճանձրալի դրաման ուսումնասիրում են Յուրի Բոնդարեւը, Անդրեյ Բիտովը, Սերգեյ Զալիգինը, Էնն Վետեմաան, Լիլի Պրոմետը, մեզանում՝ «Խումհար» վիպակով Հրանտ Մաթեւոսյանը, այնուհետեւ՝ Պետրոսյանը, Խալափյանը, Արշակյանը եւ ուրիշներ:

Արձակի զարգացման ուղղությունների շուրջ կենտրոնական մամուլը պարբերաբար ծավալում էր բանավեճեր: Մասնավորապես «Վոպրոսի լիտերատուրի» ամսագիրն այդ հարցերին անդրադարձել է 1964 եւ 1975 թվականներին: Տեսակետները, ինչպես միշտ, տարբեր են:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Դրվագներ Վան-Վասպուրականում Արմենական, Հնչակյան եւ Դաշնակցական կուսակցությունների գործունեությունից

Սկիզբը՝ թիվ 15

Թուրք եւ քուրդ խուժանը կատաղի գրոհի անցավ բոլոր ուղղություններով: Հայերը կորուստներ ունեցան հարձակման առաջին օրվա ընթացքում: Առաջին օրվա խուճապից հետո հայկական ինքնապաշտպանական ուժերը վերադասավորվեցին նախապես պատրաստված մարտական դիրքերում:

Կռիվներից մի քանի օր առաջ Մ. Ավետիսյանը հրավիրում է կուսակցական լիդերների խորհրդակցական ժողով: Այն տեղի է ունենում արմենական Լեւոն Խանիկյանի բնակարանում: Իր բնույթով նման ժողով առաջին անգամ էր գումարվում Վանում: Ժողովի օրակարգի առանցքը կազմում էր մոտեցող արհավիրքին դիմագրավելու հարցը: Մ. Ավետիսյանն իր խոսքում խորապես հիմնավորում է հայոց կուսակցությունների փոխադարձ համերաշխության եւ համագործակցության անհրաժեշտությունը՝ գտնելով, որ «թշնամին ահաւոր ոյժ ունի եւ իր յետեւից կայսրութիւն մը, ուստի մեզ կը մնայ շարժիլ խիստ զգուշաւոր, խոհեմ եւ գաղտնի կերպով, եթէ կուզենք յաղթանակ ապահովել եւ կոտրել գերութեան դաժան շղթան» (*Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 427, ց. 1, գ. 30, էջ 79*): Նա մասնավորապես առաջարկում է վերջ տալ ցույցերին եւ ցուցամոլական գործունեությանը, քանի որ ցույցերը «կսպառեն մեր ուժերը, ժողովուրդի մէջ յոռետեսութիւն կը յառաջացնեն» (*նույն տեղում*): Բնորոշ է, որ հնչակյանների պարագլուխ Մարտիկ Սարուխանյանը, հետեւելով իր կուսակցության որդեգրած դիրքորոշմանը, ի պատասխան հայտարարում է. «Ոչ, մենք ցոյց ենք անում, որ Եւրոպան դղրդի» (*նույն տեղում*):

Բարեբախտաբար, վտանգի թեժ պահին Վանում գործող քաղաքական ուժերի առաջնորդները գործեցին միակամ ու ընդգծված համերաշխության մթնոլորտում:

Պաշտպանողական դիմադրության նախագիծը նախապես գծագրված եւ պատրաստված էր:

Արմենական պարագլուխ Մ. Ավետիսյանը, հնչակյան եւ դաշնակցական պետերի՝ Մարտիկի եւ Պետոյի հետ համախորհուրդ, 1896 թ. հունիսի 4-ին դիմում է վերոնշյալ նախագծի գործադրությանը: Նախապես ցուցակագրված հինգ հարյուրից ավելի հայ ռազմիկներ տեղավորվում են «պատնեշներու» կամ «դիրքերու վերածված երկյարկանի տուներու վերին յարկերուն մէջ, որոնք շինուած էին հայ եւ թուրքաբնակ թաղերու սահմանակից՝ զուտ հայաբնակ փողոցներու վրայ» (*Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 71*):

Իսկ քաղաքում կառուցվել էին շուրջ երեսուներեք այդպիսի դիրք-պատնեշներ:

Ահավոր ու հերոսական էր Վանի դյուցազնամարտը: Հայոց մի բուռ քաջեր, իրենց պատիվը, ինչքն ու կյանքը պաշտպանելու բնականոն մղումներից դրդված, ելել էին ճակատելու անհամեմատ գերակշիռ եւ պետության կողմից կազմակերպված ուժերի դեմ: Հայկական թաղամասերը վերածվել էին ինքնապաշտպանական ճամբարների՝ շնորհիվ հայ քաղաքական ուժերի համերաշխության եւ կազմակերպվածության: Պաշտպանվելու համար օգտագործվում էր ամեն ինչ. բնական ամրությունները, բակերն ու պարտեզները, առանձնատները: Խուժանի եւ քրդական հեծելազորի առաջխաղացումը կանգնեցնելու նպատակով որոշ տեղերում կտրել էին հսկա ուռենիները՝ փողոցներում ստեղծելով բարիկադաման ամրություններ, թաղամիջյան ճանապարհները ողողել ջրերով (*տես Աճառյան Հր., Տաճկահայոց հարցի պատմությունը, Նոր Նախիջեւան, 1915 թ., էջ 40*):

➥ *էջ 6*

Այրիվանք (Գեղարդավանք) եւ Սուրբ Գեղարդ



➥ *էջ 3*

XV դ. Գեղարդավանքում բազմաթիվ ձեռագրեր են գրվել:

Պահպանված հնագույն հուշարձանը Գեղարդավանքի պարսպապատերից դուրս՝ արեւմտյան կողմում գտնվող, XII դարի Ս. Աստվածածին կիսաժայռափոր մատուռ-եկեղեցին է: Պատերին փորագրված են նվիրատվական մի քանի արձանագրություններ: Եկեղեցու հարավային պատին պահպանվել է Աղվանից Ստեփանոս Գ կաթողիկոսի (1155—1195 թթ.) թողած 1181 թ. արձանագրությունը՝ վանքին սուրբ Անդրեասի մասունքները նվիրելու մասին: XII դ. Այրիվանքն ստացել է բազմաթիվ նվիրատվություններ՝ հողեր, այգիներ, դրամ: 1190 թ. վանքում գրվել է «Տոնապատճառ» ժողովածուն, 1217 թ. վանքի միաբանների ուժերով (Սարգիս նկարիչ, Աբել գրիչ եւ Ստեփանոս կազմող) ստեղծվել է մանրանկարներով հարուստ մեծադիր Ավետարան: XII դարից Այրիվանքն անցել է հայ իշխան, զորավար Իվանե Զաքարյանի իշխանության ներքո: Իշխան Իվանե Զաքարյանն Այրիվանք է այցելել 1219 թ. եւ նվիրել Բերդաղ գյուղը:

1215 թ.՝ Զաքարյանների իշխանության եւ Բարսեղ վարդապետի վանահայրության օրոք, սրբատաշ տուֆով կառուցվել է Այրիվանքի գլխավոր՝ Կաթողիկե եկեղեցին: Կառուցման արձանագրությունը փորագրված է արեւմտյան ճակատի մուտքի վերեւում: Այն ներսից խաչաձեւ է, իսկ արտաքուստ՝ ուղղանկյուն՝ հարավային ճոխ շքամուտքով, դեկորատիվ կամարաշարով եւ հարթաքանդակներով զարդարված գմբեթով: Հատակագծային եւ ծավալատարածական հորինվածքով եկեղեցին պատկանում է Հայաստանի «խաչաձեւ գմբեթավոր» հուշարձանների տիպին՝ XII—XIII դդ. բնորոշ կառուցվածքներով: Հատակագիծը ձգված ուղղանկյունի է՝ ներգծված խաչով, որի ուղիղ կենտրոնից վեր է խոյանում քառակուսի հիմքերի վրա խարսխված սլացիկ գմբեթը: Գմբեթակիր քառակուսուց անցումը թմբուկի կորին իրականացվել է առագաստների միջոցով: Խաչի արեւելյան թեւը պսակված է կիսաշրջանաձեւ ավագ խորանով, իսկ մյուս թեւերն ընդարձակվելով ստացել են ուղղանկյան տեսք՝ ծածկված գլանաձեւ թաղերով: Խաչի թեւերի չորս անկյուններում կառուցված են երկհարկանի ավանդատներ՝ թաղակապ ծածկով, արեւելյան կողմում՝ փոքրիկ խորաններով: Ներքին հարդարանքը մշակված է XII—XIII դդ. ճարտարապետական արվեստի ոճով: Հարդարանքի վարպետ կատարմամբ առանձնանում են հատկապես թմբուկը եւ հարավային շքամուտքը: Պատերի վրա պահպանված արձանագրություններից երեւում է, որ բազմաթիվ անձինք նյութապես օժանդակել են եկեղեցու առանձին մասերի (ավանդատներ, խորան, սալահատակ եւ այլն) շինարարությանը: XV դ. Կաթողիկեի հարավային պատի տակ զույգ խաչքարեր են կանգնեցվել:

1215—1225 թթ. Կաթողիկեի արեւմտյան ճակատին կից կառուցվել է կենտրոնակազմ, քառասյուն, շթաքարային մշակմամբ գմբեթավոր գավիթ, որի հյուսիսային պատին փոխարինում է բնական ժայռը: Հատակագիծն ուղղանկյուն է՝ գրեթե քառակուսի: Գավիթը հյուսիսարեւելյան եւ հարավարեւելյան անկյուններում ունի երկհարկ ավանդատներ, որոնցից ձախակողմյան երկրորդ հարկինը նվիրված է Թադեոս առաքյալին:

1240-ական թթ. Խաղբակյան տոհմից Պռոշ իշխանը վանքը, տոհմական տապանատուն դարձնելու նպատակով, գնել է Իվանե աթաբեկի որդի Ավագից: 1257—1258 թթ. նորոգվել է Ս. Աստվածածին եկեղեցին, եւ ներսը ծածկվել է որմնանկարներով: Խորանի կենտրոնում պատկերված է Աստվածածինը՝ մանուկ Հիսուսը գրկին, երկու կողքերին՝ հրեշտակներ, իսկ առաստաղին Պռոշ իշխանի եւ իր ընտանիքի խմբանկարն է:

XIII դ. կեսից Այրիվանքում է պահվել աստվածամուխ (Աստծու՝ Քրիստոսի մեջ մեխված, խրված) սուրբ գեղարդը՝ Քրիստոսի կողը խոցած նիզակի երկաթե ծայրը, որը, ըստ ավանդության, Հայաստան է բերել Թադեոս առաքյալը: Այդ ժամանակից վանքը կոչվել է Գեղարդավանք, իսկ սուրբ գեղարդը մինչեւ XVIII դ. այստեղ պահելուց հետո տեղափոխել են Ս. Էջմիածին: 1260 թ. Կաթողիկեից եւ գավթից հյուսիս՝ ժայռի մեջ, խցեր են փորվել: 1258 թ. Պռոշ իշխանի պատվերով սուրբ գեղարդի համար դրվագազարդ պահարան է պատրաստվել: Պահարանի արձանագրության սկզբում սրբության մեծարանքի եւ պաշտամունքի բանաստեղծական արտահայտությունն է: XIII դարից Գեղարդավանքում են պահել նաեւ նոյյան տապանի փայտե մասունքը: Այս երկու սրբությունները մեծ հռչակ են բերել վանքին:

Իվանեի որդի մեծ իշխան Ավագի իշխանության օրոք՝ 1230—1250-ական թթ., իշխան Պռոշ Խաղբակյանը կառուցել է Գեղարդավանքի գավթից մուտք ունեցող, երկու զույգ խաչվող կամարներով եւ շթաքարային հարդարանքով, գմբեթավոր եւ երդիկից լուսավորվող ժայռափոր առաջին եկեղեցին (ճարտարապետ՝ Գալձագ): Հատակագիծը ոչ լրիվ խաչաձեւ է, հարավային թեւը գրեթե բացակայում է (այն ուղղակի հնարավոր չէր կառուցել՝ գավթի պատի համար մնացած տեղի սղության պատճառով): Եկեղեցին ծածկված է XIII դ. բնորոշ խաչաձեւ կամարների վրա հանգչող նրբագեղ շթաքարե գմբեթով: Գմբեթակիր քառակուսու վրա՝ նռան քանդակներով զարդարված խաչաձեւվող կամարների վերեւում, արձանագրված է. «Զվարդպետս Գալձագ յիշեցեք»: Գալձագը համարվում է վանքի ժայռափոր կառույցները կերտող ճարտարապետը: Եկեղեցու մեջ՝ հյուսիսային պատի տակ, կա ժայռերից բխող, ավանդաբար հրաշագործ համարվող սառնորակ աղբյուր («Սուրբ աղբյուր»), որը պաշտվել է հեթանոսության ժամանակաշրջանից:

1283 թ. Խաղբակյան Պռոշ իշխանը գլխավոր եկեղեցուն կից գավթի հյուսիսային կողմում կառուցել է ժայռափոր տոհմական տապանատունը եւ նրանից արեւելք՝ երկրորդ վիմափոր եկեղեցին: Եկեղեցին «գմբեթավոր դահլիճ» տիպի կառույց է: Պատերից սկզբնավորվող կիսաշրջանաձեւ կամարների վրայից բարձրանում է թմբուկը՝ պսակված գմբեթի քանդակազարդ կիսագնդով: Ինչպես եկեղեցու, այնպես էլ գավթի պատերը ծածկված են քանդակներով: Մուտքը եկեղեցի անցնում է գավթի միջով: Գավիթը ոչ մեծ չափերի ուղղանկյուն հատակագծով կառույց է եւ, հավանաբար, Պռոշյանների տոհմական տապանատունն է: Տապանատան հյուսիսային պատին Պռոշյան իշխանների տոհմական զինանշանի բարձրաքանդակն է՝ ցուլի գլուխ, որը պահում է շղթայակապ երկու առյուծի, նրանցից ներքեւ թեւատարած արծիվ է՝ ճանկերում գառ բռնած:

1288 թ. Պռոշ իշխանի որդի Պապաքը եւ իր կին Ռուզուքանը Գեղարդավանքի հյուսիսային կողմում՝ ժայռի վերին մասում, կառուցել են կենտրոնակազմ հորինվածքով քառասյուն, գմբեթից լուսավորվող խոշոր ժամատուն-դամբարան, որն ունի առանձին թունելանման մուտք՝ մոտ 10 մ երկարությամբ:

Վանական համալիրի գլխավոր մուտքից դեպի հյուսիս-արեւմուտք՝ Գեղարդավանքի արեւմտյան կողմում՝ ժայռի թեք լանջին, պահպանվել էր վիմափոր դահլիճը: 1932 թ. Թ. Թորամանյանի ղեկավարած արշավախումբը պեղումներով բացել եւ ուսումնասիրել է այս խոշոր ժայռակոփ դահլիճը՝ ուղղանկյուն հատակագծով, քանդակազարդ որմնասյունով, 5 մ բարձրությամբ եւ մոտ 140 քառ. մ մակերեսով, որը Պռոշ իշխանի օրոք՝ XIII դ., կառուցել է ոմն Մկրտիչ. իշխան Պռոշի անունը հիշատակված էր դահլիճի արեւմտյան պատին փորագրված արձանագրության մեջ: Դահլիճը, հավանաբար, եղել է գրադարան, ժողովասրահ կամ սեղանատուն: Թ. Թորամանյանը գրել է, որ բոլոր որմնակամարները, խորշերը, որմնասյուները, ամբողջ քարայրը՝ առաստաղով եւ հատակով, մաքուր հղկված են: 1967 թ. ժայռի փլուզման հետեւանքով դահլիճը գրեթե ամբողջովին ոչնչացել է:

Շարունակելի

Արման ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Զարեհ Որբունու պատմվածքները

Սկիզբը՝ թիվ 8–10, 12–15

«Մենություն» պատմվածքում հոգեկան առանձնությունն ու դրսի աշխարհի հետ շփման բացակայությունը հերոսին ստիպում են անցնել ինքնավերլուծման ուղի, եւ նա իր համար հանգում է այնպիսի եզրակացության, որի արդյունքում սեփական եսի որոնումը հանգեցնում է ինքնահիրկիզման:

Զ.

Որբունու բազմաթիվ պատմվածքներում գործողությունների փոխարեն գերիշխում են հերոսի խորհրդածությունները ու մտորումները: Սյուժետային զարգացումը հիմնվում է գլխավոր կերպարի զգացումների վրա: Այդպես է «Գինովը» պատմվածքի անանուն հերոսի դեպքում: Երբ կյանքի դաժան իրողությունները իրենց կնիքն են դնում մարդկային ճակատագրերի վրա, մարդիկ ելքեր են որոնում իրենց երազանքների ճանապարհին: Գինովությունը մարդուն կարող է թեկուզ քիչ ժամանակով կտրել մռայլ իրականությունից՝ քաջի պես անվեհեր դարձնելով: «Գինովը ինքզինքը բազմապատկած է: Գլուխը, իրանը, անդամները, հակամարտ, իրարամերժ, կռվազան, անհնազանդ անհատականություններու միությունը մը: Ծունկերը կվերնան, կթեքին: Իրանը կծռի դեպի ետ: Թեւերը առաջ կնետվին աստղերուն պլլվելու համար, որպեսզի գինովը չի թավալի...» (*Զ. Որբունի, Եվ եղեւ մարդ, էջ 302*):

Գինովցած մարդու հայացքը միշտ վեր է խոյացած՝ դեպի ազատություն, դեպի անեզրություն: Դա փախուստ է իրականությունից, գորշ ու տաղտկալի առօրյայից: Անգամ ամենածանր կամ բարկացած պահին փոթորկուն հոգին դառնում է խաղաղ ու անվրդով: Գոյությունը մի կերպ քարշ տվող հերոսի համար միակ հանգրվանը մնում են նրա երազանքները, գինովցած վիճակը. «Գինով, ահա տիեզերքը կպարգեւե քեզ իր բոլոր կարելիությունները... Հրամայե, որ բոլոր տենչանքներդ պիտի կատարվին» (*նույն տեղում, էջ 304*):

Գինովցած լինելն անեզրություն է տանում մարդուն, հեռացնում է նրան իրականությունից: Այդ իրականության ձեւերը կազմում են մի լեռ, որը գնալով մեծանում է: Գինովը համբերության աղբյուր է, թեեւ բերանում բարկության ալիքներ են պտտվում, պղպջակներ են պայթում: Թեւերը բացվում են հովհարի պես: Կարող է նույնիսկ Նապոլեոն Բոնապարտին հանդիպել, նրա հետ զրուցել: Բնությունն էլ նմանվում է մի չարաճճի տղայի, որն աթոռ է տալիս՝ նստելու համար, երբ նստելիս է լինում, քաշում է այդ աթոռը: Ու այդպես խանգարված հիշողության մեջ նորանոր վիուկներ են սպրդում՝ բացելով ազատության ու պայքարի ուղին: ➥ *էջ 7, 8*

Դրվագներ Վան-Վասպուրականում Արմենական, Հնչակյան եւ Դաշնակցական կուսակցությունների գործունեությունից

➥ *էջ 5*

Վանի ինքնապաշտպանությունը տեւում է 1896 թ. հունիսի 3-ից մինչեւ 8-ը: Հայ քաղաքական ուժերի կողմից դիմադրությունը կազմակերպված էր մարտավարական լավագույն սկզբունքներով՝ իհարկե նկատի ունենալով ստեղծված իրավիճակը եւ ունեցած հնարավորությունները: Ընդ որում, ինքնապաշտպանության ընթացքում հայերի ունեցած կորուստներն այնքան մեծ չէին, որքան որ մեծ էին անպաշտպան բնակչության տված կորուստները: Հայ մարտիկների դիմադրությունը բավական հաջող էր եւ կարող էր երկար շարունակվել, որը խիստ անհանգստացնում է թուրքական իշխանություններին եւ Վանի անգլիական հյուպատոս Ուլյամսին: Նրանք մտավախություն ունեին, որ Վանի հայության դիմադրական կռիվները շարունակվելու դեպքում առիթ կտան սահմանակից Ռուսաստանին ռազմական միջամտություն կատարելու: Այդ պատճառով էլ թե՛ թուրքական իշխանությունները, եւ՛ եվրոպական հյուպատոսները փորձում են որեւէ ձեւով վերջ տալ հայերի դիմադրությանը:

Արյունարբու Սաաեդդին փաշան կանխազգալով, որ ռազմական միջոցներով դժվար է ընկճել հայոց դիմադրությունը, եվրոպական հյուպատոսների միջոցով ակնարկում է սկսել բանակցություններ՝ զենքը վայր դնելու եւ ինքնապաշտպանության ղեկավարների՝ Պարսկաստան անցնելու վերաբերյալ: Հունիսի 6-ին Ուլյամսը հյուպատոսների անունից պահանջում է ինքնապաշտպանության փաստացի ղեկավար Մ. Ավետիսյանից անձնատուր լինել այն նախապայմանով, որ հայոց կողմի ունեցած զենքերը հանձնվեն թուրքական իշխանություններին, իսկ ապստամբների պարագլուխները տարվեն եվրոպական որեւէ նավահանգիստ: Խմբապետական խորհրդակցությունից հետո ռազմական մարմինը մերժում է այս առաջարկը: Հայերը, չվստահելով Ուլյամսի կեղծամիտ մտադրություններին, առաջարկում են բանակցություններին մասնակից լինել Վանի նաեւ ռուսական, ֆրանսիական ու պարսկական հյուպատոսներին:

Միաժամանակ կռիվը նորից սաստկանում է: Հունիսի 7-ին հայ մարտիկներին հաջողվում է փախուստի մատնել թուրք զինվորներին եւ գրավել երկու թնդանոթ:

Տարբեր կուսակցությունների, խմբերի ու խմբակների պատկանող հայ երիտասարդները, ցուցաբերելով զարմանալի համերաշխություն եւ միակամություն, օր ու գիշեր հսկում էին դիրքերը՝ հետ մղելով զորքի եւ խուժանի նորանոր հարձակումները: Հայ ինքնապաշտպանները «... կը կռուէին երգելով «կռուեցէք տղերք»-ը՝ շատ տեղ մասնակցութեամբ հեղինակին» (*Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, Ալեքսանդրիա, 1950 թ., հատ. Ա, էջ 360*):

Իսկ հեղինակը Միհրդատ Եսայանն էր՝ «... ճշմարիտ եզոպոս մը, որուն չափ գիտէր մագնիսացնել իր խօսակիցները.

Կռուեցէք տղէրք, կռուեցէք քաջ-քաջ,
Անվեհեր կանգնած թշնամուն առաջ,
ցանկալի է մեզ միշտ ազնիւ մահը,
Հեռու մեզանից ոսոխին ահը»
(*նույն տեղում, էջ 361*):

Այս քայլերգը հորինված էր դեռեւս 1895 թ. աշնանը՝ Բողազ-Քեսանի մոտ տեղի ունեցած մարտնչումների առիթով: Թուրքական իշխանությունների համար դժվար էր ընկճել հայ պաշտպանների անօրինակ ոգեշնչումով ծնված հերոսական ոգին: Ուստի, սկսվում են դիվանագիտական խարդավանքները, 1896 թ. հունիսի 8-ին անգլիական հյուպատոսը կռիվը վերջացնելու պատրվակի ներքո նոր ժողով է գումարում, որին ներկա են լինում Վանի հոգեւոր առաջնորդ Սահակ վարդապետ Բագրեւանդյանը, Վանի Նազըմ փաշան, պարսկական հյուպատոս Միրզա Հուսեին խանը, ռուսաց կողմից՝ Կ. Չիլինկիրյանը, ինքնապաշտպանության ղեկավար Մ. Ավետիսյանը՝ քառասուն փորձառու եւ զինյալ հայդուկների հետ: Այդ ժողովում հնչած մեղադրանքներին ի պատասխան՝ Ավետիսյանը եւս մեկ անգամ հայտարարում եւ հիմնավորում է, որ իրենց մղած կռիվը ինքնապաշտպանական բնույթի եւ նշանակության է. «Թող կառավարութիւնը դադարեցնէ անզէն ժողովրդի կոտորածը, թող արգելէ ալան-թալանը... Եւ թող հոս նստած յարգելի հիւպատոսներ իրենց ստորագրութեամբ երաշխաւորէն թէ կառավարութիւնը պիտի գործադրէ մեր խնդիրքը, այն ժամանակ մենք քաղաքէն դուրս կելլենք» (*Տէր-Մկրտչեան Ե., Գանձեր Վասպուրականի, Պոսթոն, 1966 թ., էջ 459*):

Վերջապես համաձայնություն է ձեռք բերվում: Հայ մարտիկները պիտի թողնեին Վանն այն պայմանով, որ ճանապարհին չպիտի հետապնդվեին թուրքական եւ քրդական ուժերի կողմից: Վանի ինքնապաշտպանական մարմնի որոշման համաձայն՝ կռվող երիտասարդությանը՝ զենքը ձեռքին, պետք է հասցնեին Պարսկաստան: Դա պայմանավորված էր նրանով, որ հայկական ջոկատների զինամթերքը սպառվելու էր շուտով, իսկ թուրքական թնդանոթների ուղիղ նշանառության հարվածները մեծ ավերածություններ էին գործում եւ զոհերի տեղիք տալիս: 1896 թ. հունիսի 8-ի երեկոյան ինքնապաշտպանական մարմնի հրամանի համաձայն՝ զինյալ խմբերը, թողնելով իրենց դիրքերը, շարժվում են դեպի Վարագա վանքը:

Վարագայի մատույցներում հավաքվում է շուրջ 1000 զինյալ եւ անզեն երիտասարդ: Այստեղ միջկուսակցական ժողովից հետո որոշվում է, որ բոլորը միասին մի ուղղությամբ են առաջ շարժվելու: Հնչակյան զինվորները Մարտիկի առաջնորդությամբ առաջապահներ են ընտրվում, դաշնակցականները՝ Պետոյի գլխավորությամբ



«...բոլորի թիկունքից գնալու, իսկ արմենական զինվածները՝ Ավետիսյանի եւ Մուշեղի գլխավորությամբ անզեններին երկու կողմից պաշտպանելու» (*ԳԱԹ, Շահեն Կուժիկյանի ֆոնդ, 580 թ., 3բ, №31, էջ 444*): Վարագը դեռեւս շեն էր: Պատարագ է մատուցվում: Ապա յուրաքանչյուր մարտիկ վերցնում է ճանապարհի համար անհրաժեշտ հաց ու մթերք:

Այնուամենայնիվ, նահանջի հարցում տարաձայնություններ են առաջանում, եւ արմենականների խումբը, պաշտպանական անհրաժեշտ մարտակարգ ընդունելով, անմիջապես բռնում է նահանջի ճամփան: Իսկ Պետոյի եւ Մարտիկի առաջնորդությամբ դաշնակցական եւ հնչակյան խմբերը Վարագա լեռան մոտ պատսպարվելուց մի քանի օր անց նույնպես բռնում են նահանջի ճանապարհը՝ Աբաղայի դաշտով:

Սակայն երկու խմբերն էլ նահանջի հենց սկզբից հետապնդվեցին թուրքական կանոնավոր զինուժի եւ քրդական մեծաթիվ ուժերի կողմից: Թուրքական իշխանությունները խնամքով նախապատրաստել էին նահանջող ջոկատների հետապնդումն ու ոչնչացումը: Գործնականում իրենց հավաստիացումներին տեր չկանգնեցին նաեւ եվրոպական հյուպատոսները, որոնք երաշխավորել էին ինքնապաշտպան մարտիկների անվտանգ անցումը Պարսկաստան:

1896 թ. Վանի հունիսյան հերոսական ինքնապաշտպանությունը հայ սերունդներին եւ հայոց պատմությանն ավանդեց իր դասերն ու պատգամները, իր ուսանելի խորհուրդը: Այն թշնամուն ցույց տվեց հայության դիմադրական ուժն ու կորովը:

Ինքնապաշտպանական մարտերի հետեւանքով թուրքերին չհաջողվեց Վան քաղաքի հայության հանդեպ սարքել այնպիսի կոտորած, թալան ու ավերում, ինչպիսին նրանք իրագործեցին շրջակա գավառների եւ ինքնապաշտպանության միջոցներից զուրկ այլ վայրերի նկատմամբ: Ինքնապաշտպանական կռիվներում առավելագույնս իրար օժանդակեցին եւ կողք կողքի կռվեցին արմենականները, հնչակյաններն ու դաշնակները:

Դա եւս մեկ անգամ վկայեց, որ հայոց ուժերը մեկ-միասնական բռունցքի փոխարկվելու դեպքում թշնամու համար գրեթե անհնարին է դառնում հայաջինջ պլանների իրագործումը:

Վանի քաջակորով ինքնապաշտպանները ապացուցեցին, որ հայոց միասնության մեջ է հայ ժողովրդի լինելիության եւ հարատեւման գրավականը:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Զարեհ Որբունու պատմվածքները

➥ էջ 6

Անգամ լուսինն է չարաճճիություններ անում՝ պատրաստ լինելով դուրս ցատկել պատուհանից եւ մագլցել բարձր տանիքները: Այսպես գրողն անձնավորում է անշունչ առարկաներն ու իրողությունները՝ «գինով» մարդու հոգու թռիչքը բնորոշելու համար, օրինակ՝ փողոցները նմանվում են հոսանուտ գետերի, որոնք անընդհատ քաշում են: Աչքերը փակվում են արտաքին աշխարհի իրողությունների համար: Երկիրը հյուրասիրում է՝ իր բազուկները տարածած: Բնությունը տեղի է տալիս, քանի որ մարդը մերժել է իրեն, երկնքի համաստեղությունները մխրճվում են անհունության մեջ: Աստղերն իջնում են երկնքից կամաց-կամաց եւ հաստատվում նրա գլխի տակ՝ որպես թագ: Ծաղիկները բերում են իրենց նեկտարը բաժակներով եւ իրենց բազմապիսի բույրերը տարածում ամենուր: Եվ այդ վիճակում կգա արեւելյան խափշիկը, ու իրագործում կստանան բոլոր նվիրական ցանկություններն ու տենչանքները:



Ինչպես նկատում ենք, պատմվածքում սյուժետային գործողություններին փոխարինել են խորհրդածությունները: Եվ դրանց պատկերավոր բնորոշամբ էլ հյուսվում է պատմվածքի սյուժեն: Միակ կերպարը հեղինակն է, մյուս կերպարներին փոխարինել են անձնավորված իրերն ու իրողությունները: Նույն իրողություններն առկա են բազմաթիվ պատմվածքներում:

Իր կյանքի անարդարությունների եւ անհաջողությունների համար «Մենակություն» պատմվածքի անանուն հերոսը միայն իրեն է մեղադրում. «Ո՞հ, ինչպես ինքզինքս ուրիշներու մեջ կորսնցուցեր էի: Եվ զուր անձկությամբ մը փնտրեր եմ ինքզինքս ուրիշներու մեջ՝ կյանքի բոլոր ճամփաներուն վրա, բոլոր շենքերու դռնեն ներս: Մուրացկանի մը պես դուռնե դուռ ինքզինքիս տված հարցումներուս պատասխանը ուրիշներե ստացա ըլլալուս: Երբեք, երբեք ես իմ սեփական եսիս ձայնը չեմ լսած, ու խորհելով մահվան՝ որով հղի են վայրկյանները՝ սարսռացած եմ…» (*Զ. Որբունի, Եվ եղեւ մարդ, էջ 308*):

Այս պատմվածքում եւս շնչավորվում են իրականության երեւույթները: Բնության երեւույթները նմանեցվում են անշունչ առարկաների: Հովիտը տարածվում է շուրջը, առուները անվերջ նախադասության վերջակետեր են դառնում: Երկինքը կափարիչի նման ծածկվում է վրա: Վայրկյանները հղի են մահվան տագնապով:

Գրողը պատկերավոր ձեւով նկարագրում է մենության տագնապը: Սարսուռի գոտին անմիջապես կապում է մեջքը: Զգում է մարմնի մերկությունը: Խոտերն են փսփսում, մարմնի վրայով որդեր են անցնում: Բնության անշունչ ու շնչավոր առարկաները, իրողությունները միավորվում են մի տիեզերական պարով, որ խլում է մտքի լարվածությունը: Բուրգերի պես անշարժ լեռները անապատից վերադարձող ուղտերի քարավանի են նմանվում: Մայրիների անտառները դառնում են դաշնամուրներ: Երկրաչափական կտրվածքով ածուները դառնում են պալատներ: Ստեղծվում է այնպիսի զգացում, թե բնության բանակը հալածում է մենությունը, ինչպես եղնիկը որսորդի առջեւ:

Պատմվածքի ամեն դրվագն ինչ-որ զգացում կամ ապրում է բովանդակում: Օրինակ՝ փակել է պատուհանն այնպես, որ տիեզերքի կախարդական նվագը դուրս չսողոսկի, չներթափանցի սենյակ: Եվ այդ լռությունը նմանվում է Կարապի հոգեվարքին: Սրում է մտքի ականջները՝ մոտեցնելով հոգու դռանը, որի սողնակի անցքից էլ դիտում է զարմանահրաշ իրողությունները: Նախնիներն են շինել մսեղեն ու հողեղեն էությունը, հոգու պալատը, որի սրահներում յուրաքանչյուրն իր գահն է պահում: Այստեղ են թափթփված մորուքներով ծերունիների իմաստասիրությունները, որ պարտադրել են իրեն: Դափնեզարդ պատվանդանի վրա աստվածները նվագախումբ են կազմում, բանաստեղծներն իրենց աթոռների վրա վերամբարձ արտասանություններին են դիմում: Բոցերի լեզուները կրծքի պատերն են ծեծում: Հանկարծ պատերի մեջ հեղաշրջում, փախուստ է կատարվում: Սարսափը տիրում է ամենուր: Նվագը դադարում է, դեպքերն իրար են զարկվում ու փշրվում: Ջույգ աչքեր մանգաղների նման սպառնալիքներ են թափում: Ու հոգին նմանվում է պարահանդեսի վերջում տակնուվրա եղած սրահի՝ տխուր ու մելամաղձոտ:

Եթե կյանքի ամեն ծառացած անարդարության ու կեղծիքի դեմ մարդը հանդես գա իր եսով, հաստատակամորեն մնա իր սկբունքներին հավատարիմ, ապա կկարողանա դիմագրավել կյանքի ցանկացած անարդարության: Մենակությունը մարդուն տալիս է այս ամենը գիտակցելու եւ արժեւորելու զգացումը: Հնարավորություն է տալիս խորհելու կյանքի մասին, տալու տարբեր իրողությունների վերաբերյալ ճշգրիտ վերլուծություններ: Անցյալի քննությամբ, ներկայի արժեւորումով մարդն ապագայի հեռանկարն է գծում, ճիշտ ու նպատակային ապրելու գաղափարն է ընդգծում: Կյանքի արժեւորման ճանապարհին մենակությունը հանդես է գալիս իբրեւ անհրաժեշտ իրողություն, զգացողություն, որը ճիշտ վերլուծությունների հնար է:

«Հանուն տառապանքին» պատմվածքի հերոսը վաճառական է: Հայտնի է, որ առեւտրականի ամենակարեւոր գործառույթը մարդանց ծառայելն է, սպասարկելը: «Հաճախորդին առաջ պզտիկանալը մազ կը կազմե առեւտուրին: Անկարելի է ըմբռնել առեւտուրը առանց նվաստացումի: Պետք է որ առեւտրականը ծռե գլուխը, ստորադասե ինքզինքը, որովհետեւ շողոքորթությունը մարդու մեջ կխրախուսե պատվի մուրացկանը եւ զայն կվերածե կանոնավոր հաճախորդի…: Օրն ի բուն ըրածս ուրիշ բան չէ, եթե ոչ խոնարհիլ մարդոց առաջ» (*նույն տեղում, էջ 289*):

Հերոսն առանձնահատուկ վերաբերմունք ուներ ծերունու նկատմամբ, որին ամեն օր կարելի էր հանդիպել հրապարակում: Հենց այս վայրում էլ խաչվում էին բազմաթիվ մարդկանց ուղիները: Ամենաքիչը գոնե մեկ անգամ մարդիկ օրվա ընթացքում անցնում էին այդ վայրով: Հրապարակի անցնողները տեսնում էին նրան, բայց համակ ուշադրության չէին արժանացնում: Մարդիկ տարիներ շարունակ ծերունուն խենթ էին համարում, բայց նա խենթ չէր: Յուրաքանչյուր քաղաք իր խենթն ունի, ինչպես զանգակատունը: Մարդիկ նրանց խենթ են անվանում, բայց գրողի կարծիքով, եթե աշխարհի բոլոր խենթերի կարծիքը հարցնեինք, նրանք մեզ խենթ կհամարեին, եւ ոչ թե մենք՝ նրանց: Պատմվածքի հերոսին տառապանք է պատճառում ծերունու վիճակը: Պարզ է, որ վերջինս՝ իբրեւ ապրող էակ, կարոտ է մի շարք պիտույքների, իրերի, որոնք կարող է խանութպաններից, առեւտրականներից ձեռք բերել: Միայն օդով եւ ջրով հնարավոր չէ ապրել: Կյանքը բազմաթիվ այլ «մանրմունր բաների» կարիքն ունի:

«Որո՞ւն չէ պատահած դրամական նեղություն ունենալ: Մանավանդ ամսեգլխուն» (*Զ. Որբունի, Եվ եղեւ մարդ, էջ 294*): Ինչքան էլ նեղ վիճակում լինի, հերոսը չի ցանկանա գումար վերցնել բարեկամներից: Այդ արարքը նրա համար նվաստացուցիչ է: Դրամ ուզելը մուրացկանություն է: Երբ գումարը ձեռքին՝ մոտենում է ծերունուն, վերջինս մերժում է. «—Կաղաչեմ, ոչ մեկ բառ: Ես դրամի պետք չունիմ: Դրամը ի՞նչ է: Գլխես վեր դրամ ունիմ» (*նույն տեղում, էջ 299*): Գրպանից հանում է դրամներն ու ցույց տալիս:

Գրողը նշված պատմվածքում գլխավոր հերոսի ու ծերունու միջոցով նկարագրում է մարդկային վեհ հատկանիշներով ընդգծված մարդուն, ցույց տալիս, որ կյանքի դժվարությունները չեն փոխում մարդկային ազնվագույն տեսակը: Բացակայում էր միայն գուրգուրանքը, քանի որ կյանքն անտարբեր էր նման մարդկանց նկատմամբ: Ծերունու անուրանալի խեղճությունը մարդու սիրտ էր տրտմեցնում: Այդ խեղճությունը ծնվել էր մարդկանց քար անտարբերությունից, սիրո ու հարգանքի պակասությունից:

Մի շարք պատմվածքներում հանդես է գալիս միայն մի կերպար, եւ սյուժեն զարգանում է նրա խորհրդածությունների ու ապրումների միջոցով: «Մենակություն» պատմվածքում նկարագրվում է հերոսի ներաշխարհը, արտացոլվում են նրա ապրումները: Փլուզվել է հոգեկան անդորրը, նրա հոգին բաժանվել է բազմաթիվ բեկորների: Նման պահերին բնությունն է դառնում սփոփանք, բայց այն հաճախ նաեւ ճնշում է մարդուն. «Հովիտը կտարածվի շուրջս, ուր առուները անվերջակետ նախադասության մը կետադրություններ են: Մայրիները կսողոսկին լեռներն ի վեր ու կհամբուրեն երկինքին կապույտ երիզները: Երկինքը կափարիչի նման կփակվի վրաս: Ու երբ աչքերս ավելի ուժով սեղմած կգտնեմ ինքզինքս, ամեն ինչ խույս կուտա շուրջես, համաչափ ընկրկումով, եւ ահա, երկինքի կափարիչին տակ՝ կնմանիմ իր պատյանի մեջ մենավոր շերամին» (*նույն տեղում, էջ 308*):

Մի այլ դրվագում գրողը նշում է. «Հանկարծ,— երբ դեռ հազիվ մենության խաբկանքը ունեցեր եմ,— լուսինը կերկարե իր ճառագայթե մատները, որոնք կմերկացնեն զիս: Սարսուռը գոտի կկապե մեջքիս: Խոտերը մորթիս վրա կփսփսան, կապրին… որդերը կսահին դանդաղ, միջատները կհամբուրվին: Փոսուռա մը կանցնի օդին մեջեն: Անիկա պիտի ուզեր վետվետուն լույսովը հրդեհել անջրպետը, բայց խավարը կկլանե զինքը…» (*Զ. Որբունի, Եվ եղեւ մարդ, էջ 309*): Ուրեմն բնությունը հաղորդակից է մարդու մենակությանը, արձագանքում է այդ վիճակին՝ հաճախ փորձելով հալածել այդ մենակությանը:

Մենակության գերազանց վիճակը սեփական եսի վերագտնումն է. «Ասիկա գերագույն պահն է՝ ուր կամաց-կամաց կմոտենամ եսիս, մինակությանս գերազանց հաճույքին: Բայց ինչպես մեծ կըլլա զարմանքս, երբ ականջներուս կհասնին ներսի շշուկները…», կամ՝ «Կրկին մտքիս ականջները կսրեմ ու կմոտեցնեմ հոգիիս դռան: Անոր աչքերը սողնակին ծակեն ներս կսպրդին: Հավատքը ունիմ հոն ինքզինքս գտնելու: Այնտեղ է, որ եսս ապաստանած պիտի ըլլա: Իմ համեստ եսս: Եթե գտնեմ զայն, այնպես պիտի սիրեմ, այնպես պիտի գրկեմ, որ այլեւս չպիտի թողում ուրիշները գան կորսնցնելու անոր հետքը» (*նույն տեղում, էջ 310*):

Հերոսի խորհրդածությունների միջոցով գրողն առաջադրել է փիլիսոփայական մի շարք հարցադրումներ: Չկա առանձնացված վայր՝ պատմվածքի գործողությունների ծավալման համար: Խորհում է հերոսը, նրա մտորումներին ձուլվում են բնության ներդաշնակ պատկերները: Մենակությունը լավ կյանքից չի սկսվում: Մենակության ակունքները պայմանավորված են կյանքի իրողություններով ու հանգամանքներով: Չնայած այդ վիճակը տխրություն է պարգեւում, այնուամենայնիվ հնարավորություն է տալիս հոգու անկյունները ներթափանցելու, կորցրած եսը փնտրելու: Ցավ է, որ որոշ մարդիկ ապրում են միայն հանրային ընկալումներով՝ առանց սեփական կարծիքի ու դիրքորոշումների: Մարդն առանց եսի չի կարող կյանքում իր ծիլերը տալ, միահյուսվել կյանքի բնականոն ընթացքին, ապրել ներդաշնակ ու խաղաղ կյանքով, հանրագումարի բերել կյանքում ապրած բոլոր ակնթարթները, զգալ սխալներն ու արժեւորել դրականը, ցանկալին ու կարեւորը: «Երբ ոտքի կելլենք մեկնելու համար, հոգիիս շրթներուն վրա թրթռացող երգ մը կլսեմ: Այդ քաղցր երգը ես եմ, բեղնավորված ծիլը, որ ինքնալ բազմաթիվ ծիլերու պիտի վերածվի» (*Զ. Որբունի, Եվ եղեւ մարդ, էջ 311*): ➥ էջ 8

Կորոնավիրուս

Կորոնավիրուսը համաշխարհային, գլոբալ մասշտաբի հիմնախնդիր է, որի հետ մարդկությունը դեռ չէր հանդիպել: Սակայն կարծիք կա, որ հենց այդ մահացու վտանգի շնորհիվ երեւի թե կվերականգնվեն մեր մարդասիրական արժեքները:

Կորոնավիրուսը սպառման կարանտին է, եւ այն իր հետ բերեց եւ կբերի թե տնտեսական, թե հոգեբանական եւ թե մշակութային խոր հետեւանքներ:

Ուզենք թե չուզենք՝ ստիպված ենք կրճատել մեր ծախսերը, սովորել քիչ ճամփորդել կամ չճամփորդել, քիչ գնումներ կատարել... Երեւի շատ շուտով կտեսնենք, որ աղջիկները կուրախանան ամենապարզ, սովորական շոր ունենալով, նորից մեջտեղ կհանեն հին, սիրելի իրերը, կվերընթերցեն կամ կսկսեն կարդալ գրքեր: Այսինքն՝ մարդիկ ստիպված կլինեն ավելի քիչ սպառել եւ գոհանալ այն ամենով, ինչ ունեն: Երիտասարդությունն այլեւս չի ձգտի շատ իրեր ձեռք բերել՝ տներ, մեքենաներ, հագուստ եւ այլն: Այդ բոլորը կդադարի հրապուրիչ լինելուց:

Կարող է սարսափելի կամ նույնիսկ ցինիկ թվալ, բայց փաստը մնում է փաստ, որ հաճախ այն, ինչ վատ է մարդկանց համար, լավ կամ ցանկալի կլինի բնության համար եւ կհանգեցնի էկոլոգիական բարելավման:

Վերջին շրջանում Չինաստանում կատարված աերոֆոտոլուսանկարները ցույց տվեցին, որ արտադրության դադարեցման շրջանում երկինքը մաքրվել է, իսկ վիրուսի բացահայտման օրից նվազել են ածխաջրի արտանետումները եւ արդյունաբերական արտածորումները: Ինչ խոսք, ժամանակ է պետք կորոնավիրուսը լիարժեք գնահատելու համար:

Կարելի է նշել աղետի եւս մեկ դրական հետեւանք. դա աշխատանքային հարաբերությունների նոր համակարգի ստեղծումն է, ավելի մեծ հարգանքի տածումը յուրաքանչյուր աշխատանքի եւ աշխատողի նկատմամբ, արտադրության ավելի հարմարավետ պայմանների ստեղծումը (Չեռնիգովսկայա, Լայթման):

Կորոնավիրուսի հետեւանքով բազմամարդ հավաքները, մարդկանց մեծ քանակություն պարունակող նույնիսկ կարեւոր միջոցառումները չեղյալ հայտարարվեցին: Մի բան, որ կազմակերպիչներին ստիպեց փնտրել միջոցառումներն անցկացնելու նոր կերպեր, ձեւաչափեր, ինչպես նաեւ տեղեկություն փոխանցելու ինովացիոն նոր միջոցներ:

Կորոնավիրուսն ստիպեց մարդկանց դանդաղեցնել տեմպը, հրաժարվել ինքնաթիռներից, աշխատել տանից, զվարճանալ միայն մոտ, հարազատ մարդկանց կամ պարզապես ընտանիքի անդամների հետ, սովորեցրեց մեզ լինել ավելի ուշադիր եւ ինքնաբավ:

Երեւաց «մոդա» արտահայտության վերջը, մոդաների ցուցադրումը, նորաձեւության ինդուստրիան դարձավ անհեթեթ ու անիմաստ մի բան:



Ճամփորդությունների գովազդը՝ ծիծաղելի, ապագայի նկատմամբ գծած ծրագրերը, պլանները՝ անվստահելի: Եվ ընդհանրապես, կունենա՞ այդ բոլորն ինչ-որ իմաստ կամ նշանակություն: Արդյունքում, կամա թե ակամա, ամեն Աստծո օր կասկածի կենթարկենք ծնված օրվանից մեզ ծանոթ մտածողության, գործելու հայտնի եղանակները:

Եվ չնայած արդեն սկսել ենք գիտակցել, որ Երկիր մոլորակը պահպանելու, մարդկության հետագա կյանքն ապահովելու համար անհավանական քայլեր պետք է ձեռնարկենք, պետք է փոխենք մեր կյանքի փիլիսոփայությունը, իրերի արտադրությունն ու սպառումը, փոխենք մեր զվարճանքի միջոցներն ու ձեւերը: Կարծես թե կորոնավիրուսն ակնհայտորեն արագացրեց այդ գործընթացը եւ ստիպեց մարդկանց անել այն, ինչ մարդկությունը չէր կամենում անել իր հոժար կամքով:

Դրա հետ մեկտեղ բացվեցին նոր հնարավորություններ տեղական արհեստավորների ապրանքների արտադրության, կիրառական արվեստի բոլոր այն ճյուղերի համար, որտեղ առաջին հերթին գնահատվում է ձեռքի աշխատանքը:

Հույս կա, որ ստիպված կլինենք ստեղծել նոր տնտեսություն՝ արտադրության միջոցների եւ այլ արժեքների, ապրանքների փոխադրման եւ բաշխման, մանրածախ առեւտրի մի նոր աշխատաշուկա:

Համաճարակը նախ եւ առաջ կփորձի մեծ վնաս հասցնել գերթանկ ապրանքներին, հյուրանոցային բիզնեսին, սննդամթերքի ներմուծմանը եւ այլն:

Եվ որպեսզի գոյատեւենք, պետք է փոխենք ինքներս մեզ, պետք է սովորենք քիչ սպառել (այդ թվում՝ տեղեկություն), հրաժարվենք մեր մտածելակերպի, սովորույթների մեծամասնությունից ճիշտ այնպես, ինչպես հրաժարվում են թմրանյութերից:

Եվ եթե ճիշտ են աշխարհի գլխավոր թրենդսեթթերի (Trend Union) հիմնադիր Լի Էդերկորդի կանխատեսումները, ապա անսովոր, առեղծվածային վիճակում հայտնվելն անխուսափելի է:

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Երեւանի Յոլյանի անվան արյան փոխներարկման ինստիտուտի, ԵՊԲՀ ֆարմակոլոգիայի ամբիոնի 2020–2021 ուս. տարվա հայցորդների, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի մագիստրանտների, ինչպես նաեւ Մ. Լայթմանի եւ Տ. Չերնիգովսկայայի կարծիքները համավարակի մասին:

Նեյրոլինգվիստ Տ. Չերնիգովսկայայի համոզմամբ՝ համաշխարհային վարակի նման իրավիճակ չի եղել մեր մոլորակի վրա. այն առ այսօր շարունակում է ունենալ չափազանց մեծ ազդեցություն մարդկանց ապրելակերպի, հոգեկան վիճակի, աշխարահայացքի եւ իրական արժեքների գնահատման վրա: Նշում է այն անհերքելի բացասական դերը, որ ունի վիրուսը՝ մարդկային շփման բացակայության եւ վիրտուալ աշխարհից կախվածության առումով:

Ըստ հրեա կաբալիստ Մ. Լայթմանի՝ համաշխարհային վարակը բացառիկ հնարավորություն է տալիս վերագնահատելու արժեքները եւ վերահիմաստավորելու սեփական կյանքը: Նրա կարծիքով՝ կորոնավիրուսը կնպաստի դրական փոփոխությունների մեր կյանքում, կբերի հոգեւոր հանգստության եւ կօգնի մարդկությանը հասնել ներդաշնակության: Ըստ Լայթմանի՝ մարդ արարածն ստեղծված չէ վազելու համար, եւ գիտության նորագույն նվաճումների հետեւից էլ «վազելու» կարիք չկա: Նա կարծում է, որ եթե չլիներ համավարակը, անպայման կսկսվեր համաշխարհային պատերազմ:

Բազմաթիվ կարծիքներ են հնչել, թե ինչպես է ի հայտ եկել COVID-19 վարակը, եւ ինչպես է այն տարածվել մոլորակի վրա, եւ կմ՞ այստեղ դիտավորություն, թե՞ ոչ: Ինչեւէ: Այս համատարած սահմանափակումների, մեկուսացումների, արգելքների պայմաններում որոշ ընկերություններ ունեցան գերշահույթ, օրինակ՝ Amazon-ը, դեղագործական ընկերությունները եւ այլն: Այստեղ հարց է ծագում՝ արդյոք վարակը միտումնավոր չէր ստեղծված՝ հարստացնելու որոշ ազդեցիկ «գործարարների»:

Շարունակելի

Սուսաննա ԴԱՎԹՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. դոկտոր

Զարեհ Որբունու պատմվածքները

➥ *էջ 6, 7*

Մենակությունը հերոսին վերադարձնում է նրա եսը: Նա իրեն մեղադրում է, որ շարունակ ապրել է առանց սեփական եսի գիտակցման՝ իրեն փնտրելով ուրիշների մեջ, նրանց արարքներում: Մեծագույն սխալը ուրիշների ասածով ապրելն է, սեփական կարծիքն արժեզրկելը: Միայն այդպես կարելի է խառնվել կյանքի աղմուկին, այդ դեպքում հոգին ծիլեր կտա, իրականության մեջ այդ ծիլերը պատճառ կդառնան նաեւ ուրիշ ծիլերի:

Որբունու հերոսները ներքուստ անսահման բարի են, համակերպվող, հանդես չեն գալիս իբրեւ կյանքի տերեր: Նրանք ծառաներն են ժամանակի, կյանքի եւ իրենց իշխողների: Կյանքում որպես իրենց սեփականություն մնում են երազանքները, գինու միջոցով տրվող մոռացումը, որը հերոսին կտրում է իրականությունից եւ տանում մի այլ աշխարհ, որտեղ ոսկին չէ կյանքի հիմնը, բռնությունը չէ մարդու խոսքը: Վերերկրային ապրումների գնով կերպարները փնտրում են կյանքի խաղաղ հանգրվան:

Կերպարները հաճախ անջրպետված են հասարակությունից, որպես ընկերներ՝ ընտրում են մենակությունը, բնությունը: Նրանց կյանքի սկզբունքները տարբերվում են հասարակության մեջ ընդունված նորմերից: Մենակությունը դառնում է նրանց ընկերն ու բացում հոգու դռները, ինչի շնորհիվ էլ ընթերցողը ճանաչում ու գնահատում է պատմվածքների հերոսներին՝ հիմք ընդունելով նրանց խորհրդածություններն ու մտորումները կյանքի տարբեր իրողությունների վերաբերյալ:

Հանդիպում են նաեւ պատմվածքներ, որոնցում հանդես են գալիս միայն բացասական հերոսներ: «Ավանդութիւն մը» պատմվածքի հերոսներն են դագաղի առեւտրով զբաղվող պարոն Քառլիեն ու նրա քարտուղարը: Պարոն Քառլիեի համար մարդկային կյանքն արժեք չուներ: Նրա համար կարեւորն իր առեւտուրն էր: Կարողացել էր հմտանալ դագաղ պատրաստելու գործում ու զբաղվել դագաղի վաճառքով: Ինչպես նրա քարտուղարն է ասում, «եթէ կարելի է այդպէս ըսել, Պրն. Քառլիէ աւելին իր շինած դագաղին է որ կը հետեւի քան թէ անոր մէջ պառկող ննջեցեալին: Ասիկա հին աւանդութիւն մըն է՝ երբ դեռ Պրն. Քառլիէ գիւղին վերի փոքրիկ արհեստանոցը ուներ միայն: Հիմակուան այս գեղեցիկ գործարանը ամբողջութեամբ ողջերուն չի պարտիր...» (*Զ. Որբունի, Անձրեւոտ օրեր, էջ 114*):

Մարդիկ մահանում էին, պարոն Քառլիեի առեւտրի սահմաններն ընդլայնվում էին: Մարդկանց հոգսերը, առօրյա խնդիրները նրա հետաքրքրությունների շրջանակում չէին: Կարեւորը՝ մարդ մահանար, եւ իր դագաղները վաճառվեին. «Պէտք է խորհիլ, որ ողջերը այնքան ալ նպաստաւոր չեն առեւտուրին, տնտեսական այս գէշ ժամանակներուն: Կեանքը կաղն ի կաղ կը քալէ, բայց կարելի չէ մահը կասեցնել իր անարգել քայլին մէջ, մեռելները կարելի չէ թաղել առանց դագաղի» (*նույն տեղում, էջ 115–116*):

Նման կերպարներ ստեղծելով՝ գրողը նրանց հակադրում է այն մարդկանց, որոնք ջանք ու եռանդ չեն խնայում՝ իրենց առօրյա կյանքը բարելավելու նպատակով: Գրողի պատմվածքների պարզ ու հասարակ հերոսները հաճախ բարձր արժեքներով օժտված մարդիկ են, որոնք բախվել են կյանքի արատավոր կողմերին:

Ամեն մեկը յուրովի է դուրս գալիս այդ թնջուկից, որոշ կերպարներ՝ զրկանքների ու կորուստների գնով, այլ կերպարներ չեն հաշտվում իրականությանը եւ կորցնում են պայքարելու ունակությունը: Բոլոր պատմվածքներում էլ գրողը ձաղկում է կյանքի արատավոր կողմերը, իր հերոսներին ներկայացնում է իրականության դժվարին առօրյայում, խնդիրների մեջ թաղված: Նկարագրում է նրանց կյանքից մեկ օր կամ մեկ դրվագ՝ ցույց տալով, որ դա կյանքի շղթայի շարունակական օղակներից մեկն է: Իրականում հայրենիքից հեռու ապրող հայի կարգավիճակը երբեք էլ չի փոխվում:

Շարունակելի

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am astghikstam@gmail.com
web կայք՝ **krishayas.wordpress.com**
Ստոր. տպագր. 1.09.2021 թ.
Տպաքանակը՝ 1225